Ազգ
Azg
12 ՅՈՒՆԻՍ 2009 ՈՒՐԲԱԹ 108 (4244)
ISSN: 1829-1651

## Մասաչուսեթս նահանգում Ցեղասպանությունը կընդգրկվի դպրոցական ծրագրերում

**Հայոց ցեղասպանության իրողության դեմ թուրքական քարոզչությանն ի պատասխան ԱՄՆ շրջանային դատարանի գլխավոր դատավոր Մարկ Վոլֆը որոշում է կայացրել, որը Մասաչուսեթս նահանգի կրթության դեպարտամենտին թույլ է տալիս շարունակել Հայոց ցեղասպանության եւ մարդկության դեմ կատարված այլ ոճրագործությունների մասին փաստերն ընդգրկել պատմության դպրոցական ծրագրերում ու այդ մասին խոսել հանրային դպրոցների դասաժամերի ընթացքում:**

**Ամերիկայի հայկական համագումարը ողջունել է դատարանի այդ որոշումը՝ ընդգծելով, որ այն հստակ «մեսիջ» է ուղարկում Թուրքիային եւ այդ երկրի դաշնակիցներին, որ պատմությունը չեն կարող սրբագրել ու ներկայացնել պաշտոնական Անկարայի ժխտողական դիրքորոշմանը համապատասխան: Համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ Քերոլայն Մուգարն ընդգծել է, որ Հայոց ցեղասպանության անվիճարկելի փաստը ներկայացնող ընդգրկուն պատմական ու իրավական ապացույցների շնորհիվ այս դատավճիռը հաղթանակ է բոլոր նրանց համար, ովքեր մտահոգված են Հայոց ցեղասպանության ճանաչման եւ նման ոճրագործությունների կանխման հարցով:**

# Ծանր է Իլհամ Ալիեւի վիճակը

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**ԼՂՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ**

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների պետերբուրգյան հանդիպմանը հաջորդած «տնային վերլուծություններից» Իլհամ Ալիեւը, կարծես, սկսել է հասկանալ, որ «մադրիդյան սկզբունքների» շուրջը բանակցային գործընթացի միակ տրամաբանական հանգրվան է դառնում Լեռնային Ղարաբաղի՝ միջազգայնորեն, այդ թվում՝ առաջին հերթին հենց իր երկրի կողմից ճանաչված այնպիսի կարգավիճակը, որը բացառում է ԼՂ-ի իրավահենթակայությունն Ադրբեջանին:




Չի կարելի բացառել, որ այդ կարգի նրբությունները հասկանալու համար նրան օգնել է թուրքական դիվանագիտությունը, թեեւ հավանական է, որ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի շրջանավարտ Իլհամ Ալիեւը քաղաքականությունից այնքան բան է հասկանում, որքան իր հանգուցյալ հայրը, որը Քի Վեսթում փաստորեն համաձայնել էր միջնորդների առաջարկությանը, սակայն վերադառնալով Բաքու՝ դրժեց նախագահական խոստումը՝ պատճառաբանելով, թե «տանն իրեն նեղում են»:

Հայր Ալիեւին այն ժամանակ հասկացան ե՛ւ միջնորդները, ե՛ւ հայկական կողմը. մարդն, ի վերջո, չուներ ցմահ նախագահական մանդատ, բայց որդու պարագայում ինչ-որ բան այն չէ. չէ՞ որ ընդդիմությունը գլխովին ջախջախված է, եւ ինքն ունի անվերջ նախագահ «ընտրվելու սահմանադրական լիազորություն», իսկ երկրում սկսվել է «օրենսդրական բարեփոխումների» մի գործընթաց, որը եթե ավարտին հասցվի, կարծում ենք՝ անպայման կհասցվի, ապա Ադրբեջանի բոլոր «ընտրովի» պաշտոնյաներն ազատ կլինեն անընդմեջ ոչ ավելի, քան երկու ժամկետ իրենց տեղերում չմնալու գլխացավանքից: Օմբուդսմենի եւ գլխավոր դատախազի հարցն արդեն լուծված է, մյուսները, եթե կան, հերթի են կանգնած: Այնպես որ՝ «նեղելու» մասին հազիվ թե խոսք լինի:

*Տես էջ 3*

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

## «Անկարայի եւ Երեւանի միջեւ սառը պատերազմն ավարտվել է»

**Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն հայտարարել է, որ Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերություններում սառը պատերազմի ժամանակաշրջանն ավարտվել է, Անկարայում սպասում են նախագահ Սերժ Սարգսյանի այցին: «Ավարտվել է սառը պատերազմի ժամանակաշրջանը»,-Դավութօղլուի խոսքը մեջբերել են թուրքական ԶԼՄ-ները: Նախարարի կարծիքով՝ Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերություններում արդեն բացակայում է թշնամի հասկացողությունը: «Իսրայելի հետ մեր հարաբերությունները միաժամանակ ծառայում են Պաղեստինի օգտին եւ, ընդհակառակը: Ադրբեջանը նույնպես տեսնում է, որ Հայաստանի հետ մեր հարաբերությունները համապատասխանում են իր շահերին», ասել է Դավութօղլուն:**

## Հայոց լեզու, հայ գրականություն առարկայից 20 միավոր է ստացել 12 շրջանավարտ

**Հայոց լեզու, հայ գրականություն քննությանը հայտ ներկայացրած 12567 շրջանավարտներից 371-ը քննությանը չեն ներկայացել: Ըստ «Նոյյան տապանի», քննությանը մասնակցած շրջանավարտներից 12-ը ստացել են 20 միավոր, իսկ 1193-ը չեն կարողացել հաղթահարել սահմանված դրական 7,5 միավորի շեմը: Միջին գնահատականը եղել է 11,4 միավոր: Կենսաբանության քննությանը մասնակցել են 1756 շրջանավարտներ: 20 միավոր ստացել է միայն 1 շրջանավարտ, իսկ 233-ը չեն հաղթահարել սահմանված դրական միավորի շեմը: Միջին գնահատականը եղել է 11,7 միավոր: Ընդհանուր պատմության քննությանը մասնակցելու հայտ ներկայացրած 541 շրջանավարտներից քննությանը չեն մասնակցել 29: 54 շրջանավարտներ ստացել են 17,5-20 միավոր, իսկ 77-ը չեն հաղթահարել սահմանված դրական միավորի շեմը: Միջին գնահատականը եղել է 12 միավոր: Աշխարհագրության քննությանը մասնակցելու հայտ ներկայացրած 408 շրջանավարտներից քննությանը չեն մասնակցել 20-ը: 17,5-20 միավոր ստացել են 52 շրջանավարտներ, իսկ սահմանված դրական միավորի շեմը չեն հաղթահարել 30-ը: Միջին գնահատականը եղել է 13 միավոր:**



## Հերթական քրեական գործը ընտրակեղծարարության դեմ

Գլխավոր դատախազությունից հայտնում են, որ հաղորդում են ստացել թիվ 13/18 ընտրատեղամասի վստահված անձ Ա. Բաբելյանից, որ 2009-ի մայիսի 31-ին տեղի ունեցած Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ թիվ 13/18 տեղամասում Ս. Պետանյանը փորձել է 24 հատ քվեարկված քվեաթերթիկ գցել քվեատուփի մեջ եւ այդ եղանակով կեղծել քվեարկության արդյունքները: Դիմումատուն կից ներկայացրել է նշված 24 քվեաթերթիկների պատճենները: Նկատի ունենալով, որ ստացված նյութերում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 34-150-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ՝ ՀՀ գլխավոր դատախազությունում 11.06.09թ. հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ նախաքննություն կատարելու:

## Դատարանը վարույթ չի ընդունել ՀԱԿ-ի բողոքը

Հայ ազգային կոնգրեսը հայցով դիմել էր Վարչական դատարան՝ մայիսի 31-ի ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու պահանջով: Վարչական դատարանը, հունիսի 10-ին որոշում է կայացրել վարույթ չընդունել եւ վերադարձնել հայցադիմումը: Հայցը մերժելու պատճառ է եղել ՀԱԿ դաշինքի մեջ մտնող 14 կուսակցություններից մեկի (մարքսիստական) կողմից իր լիազորագիրը հետ վերցնելու փաստը: ՀԱԿ-ը այս առիթով իր բողոքն է հայտնել այն ձեւակերպելով «անհեթեթ է, քանզի ընդամենը մեկ ամիս առաջ դաշինքի մեկ այլ հայց, ընդամենը 9 կուսակցությունների ստորագրությամբ, ընդունել եւ քննարկել էր Սահմանադրական դատարանը»:

## Հայաստանի պետական բուհերում սովորում է 2 հազարից ավելի օտարերկրացի

**Ինչպես հաղորդում է «Արմենպրեսը», շուրջ 900 օտարերկրացի ուսանող սովորում է Մ. Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանում, որին հաջորդում են՝ Երեւանի պետական համալսարանը՝ 350, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ 200-ից ավելի: Օտարերկրյա ուսանողներ կան նաեւ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական, Խ. Աբովյանի անվան մանկավարժական, ինչպես նաեւ Տնտեսագիտական համալսարաններում: Սովորելու նպատակով Հայաստան են գալիս հիմնականում Իրանից՝ 1400, Հնդկաստանից՝ 500 մարդ: Կան ուսանողներ նաեւ Եգիպտոսից, Չինաստանից, Վրաստանից, Իրաքից, ինչպես նաեւ Մեքսիկայից: Նրանք նախընտրում են բժշկական, տեխնիկական գիտությունները, ինչպես նաեւ օտար լեզուները: Հայաստանում քիչ չեն ասպիրանտական կրթություն ստացող այլ երկրների քաղաքացիները: Իրանից ավելի քան 100 հոգի է դիմել կրթության եւ գիտության նախարարություն ասպիրանտական կրթություն ստանալու համար:**

## «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան մասամբ դադարեցրեց ֆինանսավորումը

**«Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի տնօրենների խորհուրդը որոշում է կայացրել դադարեցնել Հայաստանում ճանապարհաշինական ենթածրագրի ֆինանսավորումը: Այս որոշումը, սակայն, չի վերաբերում ծրագրի ավելի մեծ մասը կազմող ոռոգման ենթածրագրին: «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի հաղորդագրության համաձայն, տնօրենների խորհրդի որոշման համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարության կատարած քայլերը չեն համապատասխանում «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ժողովրդավարական կառավարման չափանիշներին: «Կորպորացիան ափսոսանք է հայտնում, որ չի կարողանալու շարունակել Հայաստանում ճանապարհաշինական աշխատանքների ֆինանսավորումը», ասել է «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի հաղորդագրության գլխավոր գործադիր տնօրեն Ռոդնի Բենտը, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Հայաստանի հետ կնքած համաձայնագրով «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան երկրին տրամադրում է 235,6 միլիոն դոլար, որից՝ ճանապարհների ենթածրագրի համար ընդհանուր առմամբ նախատեսվում էր հատկացնել շուրջ 68 միլիոն դոլար, ոռոգման ենթածրագրի համար՝ ավելի քան 160 միլիոն դոլար:**

# Ծուլորեն հոսում է հայկական ժամանակը

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Վերջին օրերի «պարապ վախտվա խաղալիքը» հարկային փաթեթն էր, որի շուրջն Ազգային ժողովում ամենավառվռուն օրինակներով խոսեցին բոլորը, եւ անգամ՝ ամենապատկերավորը ՀՀԿ-ի գործարար պատգամավորներն էին: Հասկանալի է, կառավարությունն, ըստ նրանց, անցել է սահմանը, եւ հանուն բյուջեն լցնելու՝ արդեն ոտնակոխ է անում «սիրելի» պատգամավորների շահերը: Իսկ որ հայրենի պատգամավորների մի զգալի մասը գործարարներ են, դա ոչ մեկի համար գաղտնիք չէ: Բնականաբար գործարարներն իրենք իրենց դեմ օրենք չեն ընդունի: Սակայն, մյուս կողմից, եթե բյուջեն չհավաքվի, կարող է սուզվել եւ կառավարության նավը՝ թոշակների եւ աշխատավարձերի տեսլականն էլ նրա հետ, եւ միանձնյա ՀՀԿ-ի իշխանության «ուժի» վերաբերյալ վերջին ընտրություններով «սրբագործված» լեգենդը: Այդ դեպքում ի՞նչ են անելու մեր պատգամավոր-գործարարներն անկայուն, դժգոհող, չվճարվող ծերեր եւ ուսուցիչներ ունեցող հասարակության մեջ, ո՞ւմ են վաճառելու իրենց պանիրը, շաքարավազն ու ձեթը,



ո՞ւմ են նստեցնելու իրենց երթուղայինները: Այս բոլորը շատ լավ գիտեն նրանք, ովքեր ի վերջո այս հետաձգման 15 օրն այնպես են մշակելու մեր գործարարներին, որ 15 օր հետո նրանք առանց հակադրվելու սեղմելու են կոճակն ու ընթացքն են տալու սույն օրենսդրությանը, Վարդան Այվազյանն էլ դեռ ուրիշ բան է երգելու, քանի որ նրան ասելու են՝ «խելոք մնա»: Ուրիշ բան, որ հայրենի կառավարությունում, ճիշտ որ, մի փոքր տաք-տաք են մոտեցել խնդրին եւ սառելուց հետո գուցե հասկացել են, որ չափն անցել են հարկային «լրտեսի» առումով, քանի որ գործարարների ուղեղները մեր կառավարության աշխատակիցների ուղեղներին համընթաց աշխատում են, եւ ուզած միջոցի դեմ հակամիջոց եւս կգտնեն, ու գուցե հետեւություն են անում, թե ծայրահեղություններին չպետք է դիմել, այլ համոզել-խնդրելով գործն առաջ տանել:

*Տես էջ 8*

# Սեւանի օրենքի դրույթներով արգելվում է ջրահավաք ավազանում ոսկու գործարան կառուցել

Երեկ բնապահպանության նախարար **Արամ Հարությունյանը** ԱԺ պատգամավորների քննարկմանը ներկայացրեց «Բնապահպանական վերահսկողության» օրենքի մի փաթեթ, որով ինքնավերահսկման մեխանիզմ է ներդրվելու այն տնտեսվարող սուբյեկտների շրջանում, որոնց գործունեության ընթացքում մթնոլորտ են արտանետվում թունավոր նյութեր, աղտոտվում է շրջակա միջավայրը եւ այլն: Նախարարի խոսքերով՝ օրենքը գործում է Եվրոպայի բոլոր զարգացած երկրներում, Հայաստանում դրա անհրաժեշտությունը նույնպես կա:

«Ժառանգությունից» պատգամավոր **Անահիտ Բախշյանը** նկատեց, որ «Փրոմայնինգ» ընկերությունը նախատեսում է ոսկու հանքերի գործարան կառուցել հենց Սեւանի ավազանում, եւ դրա վերաբերյալ լուրջ վտանգավոր փաստարկներ են պտտվում: Բախշյանի խոսքերով՝ նույնպիսի վտանգ է ներկայացնում նաեւ Էյ-Սի-Փի ընկերությունը Վանաձորում, Ալավերդիում:

«Այսպիսի ընկերություններին ինչպե՞ս եք վերահսկելու, քանի որ վերահսկելու մեխանիզմը շատ ընդհանուր բառերով է գրված, էնտեղ մեխանիզմ չկա եւ վերահսկիչ պալատի 2008-ի հաշվետվության մեջ գրված էր, որ բնապահպանության նորմերը խախտելու հետեւանքով տույժ-տուգանքների գումարը 2008-ին պակասել է: Նախարարության լիազորություններն էլ բավարար չեն լինելու, որպեսզի 100 տոկոսանոց օտար սեփականատեր «Փրոմայնինգին» ստիպի ինչ-որ բան անել: Ո՞րն է ձեր լավատեսությունը օրենքի հետ կապված», Բախշյանի այս հարցին նախարարը փորձեց այսպես պատասխանել. «Ենթադրենք՝ վերահսկող մարմինը այցելում է տվյալ ձեռնարկություն եւ պարզվում է, որ լուրջ խախտում կա արտանետումների կամ ջրերի մասով: Հենց այդ պահին մենք կդժվարանանք ապացուցել՝ այսօ՞ր է առաջացել, թե՞ մեկ ամիս առաջ: Հենց այս մեթոդիկան մեզ հնարավորություն է տալու, որ այս համակարգի միջոցով կարողանանք հասկանալ, արդյոք դա մշտակա՞ն բնույթ է կրել, ի՞նչ է տեղի ունեցել, ե՞րբ է համակարգը տեղեկացրել տնտեսվարողին: Եվ այդ դեպքում մեր հարցերը դառնում են կոնկրետ, պահանջները՝ հստակ: Այս օրենքով տնտեսվարողը ինքը կգիտակցի, որ այդ պայմանները պետք է պահպանվի հենց իր շահերի տեսանկյունից»:

Ինչ վերաբերում է ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցմանը, նախարարը նշեց, որ Սեւանի օրենքի 10-րդ հոդվածի համապատասխան դրույթներում արգելվում է Սեւանի ջրահավաք ավազանում նմանատիպ գործարան կառուցել:

«Այդ իսկ պատճառով նման քննարկում դեռեւս մեր նախարարությունում չի իրականացվել», ասում է նախարարը:

«Ես ուրախ եմ, որ ասում եք՝ չի կարելի ֆաբրիկա կառուցել, եւ արդյոք բացառո՞ւմ եք օրենքի մեջ փոփոխություն բերելը: Օրենքով սահմանված է, թե ինչքան իրավունք ունենք Սեւանից ջուր բաց թողնելու, բայց անցած տարի օգոստոսին օրենքի փոփոխություն բերեցիք, որով ավելացրեցիք Սեւանից բաց թողնվող ջրի ծավալը: Ինչ որ այսօր ասելու եք՝ հիշեք», նկատում է Բախշյանը:

«Ինչ որ ասում եմ, շատ լավ հիշում եմ, կխնդրեի, որ դուք էլ հիշեք, թե ես ինչ եմ ասել: Եթե նման պահանջարկ մասնավորապես Սեւանա լճի հետ կապված լինի, այդ հարցերը նույնպես բարձրացվում են օրենքով սահմանված կարգով եւ համապատասխանաբար ներկայացվում են ԱԺ-ի դատին: Հետո ԱԺ-ն հարցը քննարկելով կայացնում է համապատասխան որոշում, եւ մենք պարտավոր ենք օրենքի տիրույթները պահպանել եւ իրականացնել», եզրափակեց խոսքը նախարարը:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

# ...Գնա՜, եղբա՜յր, Աստված քեզ հույս...

**N զորամասի հրամանատար Արա Հարությունյանը մի ամբողջ անտառի տեր է. հազար երկու հարյուր հիսուն նորատունկ դալար շիվ՝ երբեմնի մացառուտի փոխարեն:**

**Եվ այս «անտառն» աշխարհում իր տեսակի մեջ թերեւս եզակի է. ամեն ծառ իր անունն ունի, շարքային զինվորի անուն՝ շարքային Արմենակ Ղազարյան, շարքային Արմեն Կարապետյան... եւ այսպես՝ հազար երկու հարյուր հիսուն ծառ-անուն, բոլորն էլ՝ երիտասարդ տղաներ, բոլորն էլ՝ երիտասարդ շիվեր, մի հսկա ուժ...**

**Այս զորամասում գիտեն, որ շիվն արմատակալում՝ կաղնի է դառնում, նորակոչիկն առնականանում՝ հայրենիքի պաշտպան զինվոր է դառնում...**

**Գնդապետ Հարությունյանը ընդամենը ամիսներ առաջ է ընդունել զորամասի հրամանատարությունը, բայց մենք հիշատակեցինք նոր եւ հետաքրքրական տասնյակ լավ գործերից միայն մեկը՝ «զինվոր-ծառ» պուրակի ստեղծումը, եւ, որովհետեւ այս զորամասում հրամանատարն է դեպի զինվորի հոգին գնում եւ ոչ հակառակը, արժե նշել զորահրամանատարի մեկ այլ, արժանահիշատակ արարք: Նշանակում ստանալուց մի քանի օր հետո շարահրապարակում կանգնած էր գումարտակը, իսկ կենտրոնում, զինվորների եւ ներկա գտնվող ծնողների աչքի առջեւ, նրանց հիացական հայացքների ներքո հրամանատար Հարությունյանը իր ...անկողինն էր հարդարում, ցուցադրելով արագություն, հմտություն, կոկիկություն ...**

**Այլեւ ո՞ւմ մտքով կանցներ, թե սեփական անկողին հարդարելը կամ, ասենք, սեփական ոտքի տակ ավլելմաքրելը «տղայականության» մտացածին կորուստ է...**

**Ընդամենն ամիսների աշխատանք, թեկուզ տքնաջան, այս զորամասում արդեն մեկ ամբողջական ոգի է ստեղծվել, մի կարգապահ եւ մեծ, ամուր ընտանիք է ձեւավորվել, ուր հայրը հրամանատարն է, զավակները՝ զինվորները, ովքեր ձգտում են անել առավելագույնը՝ ավելի բավարարելու իրենց ծնող-հրամանատարի զինվորականին վայել ավելի քան խիստ պահանջները:**

**Հիացած են բոլորը, նաեւ՝ զինծառայողների ծնողները:**

**- Աստված Հարությունյան հրամանատարի թիկունքին լինի: Հազար թոռ ու ծոռ էլ ունենամ՝ բոլորին էլ նրա մոտ ծառայության կուղարկեմ, ասում է զինծառայող, շարքային Արմեն Մարատի Կարապետյանի տատիկ Ռոզա Կարապետյանը Մերձավան գյուղից:**

**- Ես իմ երախտիքը ազատության երգի տողերով կարտահայտեմ, իր հերթին ասում է զինծառայող, շարքային Արմենակ Համլետի Ղազարյանի մայրը Ծաղկահովիտ գյուղից:**

**«Գնա՜, եղբա՜յր, Աստված քեզ հույս,**
**Ազգի սերը քաջալեր,**
**Գնա՜, թեեւ չեմ կարող գալ,**
**Բայց իմ հոգին քեզ ընկեր...»**

**Հին Հռոմում հայրենասիրությունն ինքնաբուխ էր, նոր Հայաստանում, գոնե այս զորամասում՝ նույնպես...**

ՌԻՍԱ ՂԱԶԱՐՅԱՆ

# Հակաճգնաժամային միջոցառումները կառավարության կայքէջում

**Կառավարության վեբկայքում երեկվանից տեղադրվել է «ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին» ամփոփ հաշվետվությունը, որտեղ հանգամանորեն ներկայացված են Հայաստանի ներկա եւ նախորդող ամիսների տնտեսական իրավիճակը, կառավարության իրականացրած եւ իրականացման փուլում գտնվող հակաճգնաժամային միջոցառումները արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, փոքր եւ միջին բիզնեսի ու այլ ոլորտներում համապատասխան օրենսդրական փոփոխությունները, հարկային եւ մաքսային համակարգում բարեփոխումների ընթացքը:**

Ա. Մ.

# Հայաստանը՝ ձիաբուծության ժամանակի կենտրոն

Հնդեվրոպական մշակույթն ու լեզուն պայմանավորված են եղել ձիու օգտագործմամբ: Այսօրինակ հայտարարությունը կարող է ծիծաղելի թվալ կամ դառնալ ծիծաղի առարկա, սակայն տրվող բացատրությունները ու փաստական հիմքը ապացուցում են, որ բնավ էլ ծիծաղելի չէ խոսակցության թեման:

Պատմական գիտությունների թեկնածու, մշակույթի նախարարությանը կից գործող պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Հակոբ Սիմոնյանը, որ երեկ հյուրընկալվել էր «Նովոստի Արմենիի» միջազգային մամուլի կենտրոնում, տեղեկացրեց, որ ձիաբուծության հայրենիք է համարվում Հյուսիսային Ղազախստանը: Մինչդեռ այդպիսիք համարվող մեկ տասնյակ երկրների շարքում ինտերնետային կայքէջերում չի նշվում Հայաստանը, երբ մեր երկիրը կարող է պահանջատիրոջ իրավունքով բարձրացնել ձիաբուծության հայրենիք համարվելու հարցը, քանի որ, դրա ապացույցների համաձայն, ձիաբուծությամբ Հայկական լեռնաշխարհում զբաղվել են դեռեւս Քրիստոսի ծննդից առաջ 4-3-րդ հազարամյակներում:

Հակոբ Սիմոնյանի ներկայացմամբ, մարդու եւ ձիու հարաբերությունները (ձեւակերպումը Հակոբ Սիմոնյանինն է - Ա.Հ.) կարելի է բաժանել 4 փուլի: Նախ, ձին եղել է որսի կենդանի, ապա՝ Քրիստոսի ծննդից առաջ 6-5-րդ հազարամյակում ձին օգտագործվել է հավանաբար որպես մսատու կենդանի, 4-3-րդ հազարամյակում՝ որպես կաթի միջոց եւ քաշող ուժ, իսկ ավելի ուշ ձիուն սկսել են օգտագործել ռազմական գործողություններում:

Ինչեւէ, հայկական լեռնաշխարհի առնչությամբ փաստեր կան, որոնց հիման վրա կարելի է պնդել, որ ձիաբուծության հայրենիքներից մեկն էլ Հայաստանն է: Շենգավիթում եւ Ներքին Նավերում, որ ավելի ծանոթ են Ներքին գերեզմանոց անվամբ, պեղումները ցույց են տվել, որ առկա են ձիու ոսկորներ ավելի վաղ



թվագրության, քան մինչ այդ հայտնի տվյալներում է:

Մասնավորապես, Շենգավիթի հնավայրերի պեղումներով պարզվել է, որ ձիերով նաեւ հանքաքար է բերվել մետաղագործության կենտրոններ: Ինչ վերաբերում է Ներքին Նավերի պեղումների արդյունքներին, ապա, դրանց համաձայն՝ Քրիստոսից առաջ 3-րդ հազարամյակով թվագրվող գտածոներով ի հայտ է գալիս, որ այդ դամբարաններում առկա են նաեւ զոհաբերված ձիերի ոսկորներ, որոնց զոհաբերությունն, ի դեպ, արվել է արիական ծիսակատարությանը համապատասխան:

Ներքին Նավերում, ըստ Սիմոնյանի, հայտնաբերվել են նաեւ ձիու էքսկրիմենտներ՝ թրիք, որի հետազոտությունը վկայում է, որ ձին դարման է կերել, այսինքն՝ արհեստական կեր է ստացել մսուրքում, ինչը վկայում է հենց ձիաբուծության մասին: Բացի այդ, Ներքին Նավերում հայտնաբերված կավանոթներից մեկի վրա հայտնաբերվել է ձիերի երամակ, նաեւ մարտակառք:

Ըստ այս ամենի եւ Հակոբ Սիմոնյանի մեկնաբանությամբ, Հայաստանը ունի բոլոր կռվանները հայտարարելու, որ եղել է ձիաբուծության կենտրոն: Ներկա դրությամբ, ձիաբուծությունը քիչ տարածված ու ծախսատար զբաղմունք է:

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհում ձիաբուծությանը, ապա Սիմոնյանը դժվարացավ նշել հայկական որեւէ ցեղատեսակ, բացի հայտնի ղարաբաղյան ձիերից, պարզաբանմամբ, թե որեւէ անվանում իր ժամանակին չի տրվել: «**Ազգի**» հարցին, թե ինչ է արվում կամ ինչ է հնարավոր անել աշխարհին արված բացահայտումները ներկայացնելու համար, Հակոբ Սիմոնյանը պատասխանեց, որ արվում է այն, ինչ կարող են:

Ըստ էության, միայն այս տարի է, որ պեղումներին պետական քիչ թե շատ նորմալ աջակցություն է ցուցաբերվել մոտ 10 մլն դրամի չափով, մինչդեռ նախորդ մի քանի տարիներին կատարված պեղումների ֆինանսավորումը տարեկան կազմել է միայն 2 մլն դոլար: Այդ 2 մլն դոլարով կատարվել է չորս հուշարձանի պեղում այն դեպքում, երբ արդեն իսկ պեղվել է 7 դամբարան:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Խաղատներ կլինեն միայն Ծաղկաձորում, Սեւանում եւ Ջերմուկում՝ 2013 թվականից

**«Շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում կառավարության հավանությանն արժանացած օրենքի նախագծով նախատեսվում է խաղատները կամ շահումով խաղերը 2013-ի հունվարի 1-ից կազմակերպել միայն Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի, Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի վարչական սահմաններում, ինչպես նաեւ համայնքների վարչական սահմաններից դուրս՝ առավելագույն որակավորման կարգ եւ 125-ից ավելի համարներ ունեցող հյուրանոցներում եւ մոթելներում, Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանի եւ «Երեւան» ազատ տնտեսական գոտու տարածքներում, Հայաստանի կառավարության հավանությանն արժանացած 37 մլրդ դրամից (100 մլն դոլար) ոչ պակաս ներդրումային ծրագրերի դեպքում՝ ցանկացած վայրում:**

**Անդրադառնալով այս նախագծին, վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ դրա նպատակն է Երեւանին հարակից վայրերից տեղափոխել խաղատները: Հարց առաջացավ, թե 37 մլրդ դրամից ոչ պակաս ներդրումների դեպքում հնարավո՞ր է, որ թույլատրվի խաղատուն բացել նաեւ Երեւանում: Տիգրան Սարգսյանն ասաց, որ եթե 100 մլն դոլարի հյուրանոցի կառուցման ներդրումային ծրագիր ներկայացվի եւ ներդնողը ցանկանա իր հյուրանոցում խաղատուն բացել, ապա այդ հարցը կարող է քննարկվել կառավարությունում:**

**Այս օրենքի նախագծի առնչությամբ կառավարության ներկայացրած հիմնավորման մեջ նշվում է, որ այն բխում է նաեւ տարածքային համաչափ զարգացման ռազմավարությունից եւ, միեւնույն ժամանակ, նկատի է առնվել զվարճանքի կենտրոնները զբոսաշրջային վայրերին մոտ լինելու հանգամանքը:**

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## «Մարտի 1-ի բացահայտումը թաղվեց»

### *Սամվել Նիկոյանի հանձնաժողովից միայն վատ բաներ են սպասում*

«Փաստահավաք խմբի լուծարման, ներքին խոչընդոտների սկսման գործընթացը սկսվեց մայիսի 4-ից, երբ խմբի ղեկավար Վահե Ստեփանյանը խմբի անդամներին հանգստանալու առաջարկ արեց, որը ընդունեցին խմբի երկու անդամները, կայացնելով իրավական առումով անհասկանալի որոշում՝ դադարեցնել խմբի գործունեությունը 9 աշխատանքային օրով: Մենք, իհարկե, մեր դժգոհությունը հայտնեցինք, սակայն որոշեցինք շարունակել մեր գործունեությունը մինչ մեր գործընկերներն արձակուրդից հետո կվերադառնային փաստահավաք խմբի իրենց աշխատանքին», մինչ փաստահավաք խմբի լուծարման մասին իրենց գնահատականը տալը խմբում ՀԱԿ ներկայացուցիչ **Անդրանիկ Քոչարյանը** երեկ «Դե ֆակտո» ակումբում ներկայացրեց իրադարձությունների ժամանակացույցը: Քոչարյանը նկատում է, որ խախտումներն այնքան շատ են եղել, որ հաճախ զայրույթից զատ առաջացրել են իր զարմանքը:

Անդրանիկ Քոչարյանն ու խմբում «Ժառանգության» ներկայացուցիչ **Սեդա Սաֆարյանը** երկուշաբթին սկսել են ոստիկանների հետ պարզաբանությամբ. համապատասխան ծառայություններին հրահանգ է տրվել Սեդա Սաֆարյանին եւ Անդրանիկ Քոչարյանին արգելել մտնել ԱԺ շենք: «Մեզ համար պարզ էր, որ գործընթաց է սկսվել, բայց որ կավարտվեր այսքան անփառունակ, չէինք պատկերացնում», ասաց Քոչարյանը:

Նա նկատում է, որ որեւէ մեկը չի կարողացել բացատրություն տալ, թե իրավական ինչպիսի հիմքերի համար արգելում են աշխատել: Ինչեւէ, ընդդիմության ներկայացուցիչները եւս ակամա գնացել են պարտադրված հանգստի եւ միայն մայիսի 18-ին են կարողացել անարգել մտնել ԱԺ-ում իրենց հատկացված աշխատասենյակը: Արձակուրդից վերադարձած խմբի ղեկավար Վահե Ստեփանյանի հետ տեղի է ունեցել խորհրդակցություն: Առաջին հարցը, որ ուղղել է Քոչարյանը Ստեփանյանին՝ ինչո՞ւ են ոստիկանները արգելել իրենց մուտքը աշխատասենյակ: Ստեփանյանի պատասխանն իրեն չի բավարարել: Հետագայում, սակայն, Քոչարյանը պարզել է, որ օմբուդսմենի ներկայացուցիչը նամակ է ուղարկել ՀՀ նախագահի աշխատակազմին՝ տեղեկացնելով խմբի 9-օրյա արձակուրդի մասին: «Ստեփանյանն իրավունք չուներ առանց խմբի բոլոր անդամների գիտության այդպիսի նամակ ուղարկելու», նկատում է Քոչարյանը. իրենց դժգոհության եւ մտահոգության մասին Ստեփանյանին հայտնել են, սակայն վերջինս այլեւս չի եկել աշխատանքի, ինչին էլ հաջորդել են խմբի կաթվածահարումն ու հետագա լուծարումը:

Բանախոսը հերքում է խմբի կոալիցիոն անդամ Ռոբերտ Ավագյանի մեղադրանքը, թե Քոչարյանը խմբում լարվածություն է ստեղծել: Թեպետ հնչեցրած մեղադրանքին՝ Քոչարյանը դրական գնահատեց Ավագյանի պասիվ կատարած աշխատանքը: «70 տարեկան մարդուց չես կարող պահանջել այն, ինչ կպահանջես Սաֆարյանից, Ստեփանյանից կամ ինձանից»: Սակայն Ավագյանի աշխատանքի նկատմամբ այլ կարծիք ունի Սաֆարյանը: Վերջինիս գնահատմամբ Ավագյանը հենց սկզբից նախատրամադրված էր պաշտպանելու ոստիկանությանը: «Այդ մթնոլորտում կիսաառողջ էինք դարձել, բայց դա ի՞նչ կապ ունի մեր սկսած գործի հետ: Մեր գործը պետք է ավարտեինք: Հասարակությունը սպասում էր 5 հասուն մարդու աշխատանքի արդյունքին, մինչդեռ մարտի 1-ի բացահայտումը թաղվեց», նկատում է խմբի միակ կին ներկայացուցիչը:

Անդրադառնալով Համլետ Թադեւոսյանի մահվան վերաբերյալ միջանկյալ եզրակացությանը, որ ուղարկվել է մարտի 1-ի խորհրդարանական հանձնաժողովին, Քոչարյանն ասաց, որ այն իրականում եղել է փաստահավաք խմբի եզրակացությունը, որը ստորագրել է նաեւ խմբի ղեկավար Վահե Ստեփանյանը:

Քոչարյանին զարմացրել է խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանի այդ կապակցությամբ հեռուստաեթերում հնչեցրած արտահայտությունը:

«Սկզբում ասում էր, թե փաստաթուղթը շատ լավ է կազմված, հետո ասում է՝ այնտեղ ոչինչ չկա: Հետո խոսում է զրահաբաճկոնի կորստի մասին, չհասկանալով, որ չի կորել, թաքցրել են: Համոզված եմ, որ Նիկոյանին կարող են ամեն ինչում համոզել, բայց որ Նիկոյանին համոզել են, որ պոլիէթիլենային տոպրակը կարող է ծննդաբերել եւ երկրորդը ծնել, չէի կարող պատկերացնել: Մահացածի հագուստը, որի մեջ եղել է նաեւ զրահաբաճկոնը, պոլիէթիլենային տոպրակով ուղարկվել է, այնուհետեւ ոստիկանության քննիչը վերցրել, տարել է հատուկ քննչական ծառայություն: Հետագայում, որպեսզի կարողանան ցույց տալ, թե գտան իրեղենների սենյակում, պարզվեց, որ պոլիէթիլենային տոպրակը, որը մեկ հատ է եղել, հանկարծ երկրորդն է ծնել: Այդպիսի բան բնության մեջ չի լինում: Ցավոք, Նիկոյանը չի փորձում ակնհայտ բաներ տեսնել: Թե ինչու է զրահաբաճկոնը կորել՝ ակնհայտ է, երբ զրահաբաճկոնը վրան է, փորձագետը տեսնում է վնասվածքները, համադրում եւ կարողանում նկարագրել պայթյունի օջախը: Եթե զրահաբաճկոնը չկա, ապա օջախը որտեղ ասես կարող են նկարագրել», նկատում է Քոչարյանը: Փաստահավաք խմբում ՀԱԿ ներկայացուցիչը նշում է, որ հանձնաժողովն ուշադիր կարդալով եզրակացությունը, պետք է պահանջեր քննչական մարմնի հրաժարականը, ինչը տեղի չի ունեցել:

«Համոզված եմ, որ Սամվել Նիկոյանի հանձնաժողովը չի բացահայտելու մարտի 1-ը», ասաց Սեդա Սաֆարյանը՝ հավելելով, որ Նիկոյանի հանձնաժողովից շատ ավելի վատ բաներ է սպասում, քան դատախազությունից եւ քննչական մարմնից:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Երդմնակալություն

Երեկ Երեւանի քաղաքապետարանի ընդարձակ եւ գեղեցիկ ձեւավորված ճեմասրահում կայացավ Երեւանի նորընտիր քաղաքապետի երդմնակալության արարողությունը: Ներկա էին երկրի բարձրաստիճան պաշտոնյաներ, հոգեւոր պետեր, կուսակցությունների ներկայացուցիչներ, նախկին քաղաքապետեր, նորընտիր ավագանու անդամներ եւ շատ հյուրեր:




Հանդիսավոր արարողությունը բացեց ու վարեց ավագանու անդամ Աստղիկ Գեւորգյանը եւ առաջինը շնորհավորելով նորընտիր քաղաքապետ Գագիկ Բեգլարյանին, հրավիրեց բեմահարթակ: Քիչ անց, Երեւանի պատվավոր քաղաքացիներ եւ ավագանու անդամներ Վլադիմիր Մսրյանն ու Մարտին Վարդազարյանը ներս բերեցին Լանջաշղթան ու այն գցեցին Գ. Բեգլարյանի վզին: Այնուհետեւ Գագիկ Բեգլարյանը աջ ձեռքը դնելով «Երեւանի մասին օրենքի» վրա ընթերցեց երդման տեքստը ու ստորագրեց: Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի օրհնության խոսքից ու տերունական աղոթքից հետո նորընտիր քաղաքապետին շնորհավորեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ու նշեց, որ մեծ ակնկալիքներ ունի նորընտիր քաղաքապետից. «Մայրաքաղաքը յուրաքանչյուր երկրի այցետոմսն է, երկրի դիմագծի յուրահատուկ արտացոլումը, ասաց նախագահը, -իմ խորին համոզմամբ մայրաքաղաքի հիմնախնդիրների հետեւողական լուծումը, մեր եւ ձեր դիմագիծը եւս նշանակալիորեն դեպի լավը կփոխի նաեւ այն պատճառով, որ Երեւանում տեղի ունեցող փոփոխությունները անպայմանորեն ազդեցություն են ունենում մարզերում»: Ավագանու բոլոր անդամներին շնորհավորելով նախագահը անմնացորդ աշխատանքի կոչ արեց:

Երեւանի առաջին ընտրված քաղաքապետն իր առաջին ելույթում խոստացավ Երեւանը երեւանցիների հետ դարձնել գեղեցիկ ու հրապուրիչ քաղաք:

Առավոտից նորընտիր քաղաքապետը բազմաթիվ շնորհավորական հեռագրեր էր ստանում քույր քաղաքների ղեկավարներից, որոնց թվում՝ Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

## Ծանր է Իլհամ Ալիեւի վիճակը

*1-ին էջից*

**Ըստ երեւույթին, բանակցությունների մասին Իլհամ Ալիեւը թյուր պատկերացում ունի:**

**Դրա վկայություն կարելի է համարել քաղաքական այն աղմուկը, որ Ադրբեջանում բարձրացավ պետերբուրգյան հանդիպումից անմիջապես հետո: Բոլորը միաբերան խոսում էին, որ հուլիսի սկզբներին Մոսկվայում կհավաքվեն Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Ռուսաստանի նախագահները, կհրավիրվեն նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդները, եւ «եռյակը ճնշում կգործադրի Սերժ Սարգսյանի վրա»:**

**Դատելով, որ Ադրբեջանում ազատ մամուլ եւ սեփական տեսակետ ունեցող քաղաքական գործիչ ու վերլուծաբան չկա, պարզ է դառնում, որ դա հրահանգված էր Իլհամ Ալիեւի կողմից: Անցավ որոշ ժամանակ եւ Ադրբեջանում սկսեցին ըմբռնել, որ Միացյալ Նահանգների նախագահը Մոսկվա է գալիս բոլորովին այլ օրակարգով, որ Հարավային Կովկասի առումով ԱՄՆ-ի համար առաջնահերթություն է Վրաստանի խնդիրը, որ, վերջապես, «մոսկովյան գագաթաժողով» չի ծրագրվում, եւ ոչ ոք չի պատրաստվում ճնշում գործադրել Հայաստանի վրա:**

**Ադրբեջանցիների ոգեւորության վրա սառը ջուր մաղեց հատկապես Վաշինգտոնը: Նախ Մեթյու Բրայզան հայտարարեց, թե չի կարծում, որ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպումը համընկնի Օբամայի մոսկովյան այցին, ապա պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոնը Երեւանում ասաց, որ ղարաբաղյան կարգավորումը պետք է հենված լինի միջազգային իրավունքի բոլոր սկզբունքների վրա:**

**Այս իրավիճակում Իլհամ Ալիեւը ստիպված էր գործի լծել «բոլոր անբաններին»:**

**Առաջինը խոսեց Նովրուզ Մամեդովը, ով, փաստորեն, հերքեց արտաքին գործերի նախարար Մամեդյարովին, որը պետերբուրգյան հանդիպումը գնահատել էր «կառուցողական» եւ արձանագրել «առաջխաղացում»: Նովրուզ Մամեդովն, իհարկե, արտահայտում է Իլհամ Ալիեւի տեսակետը, որովհետեւ վերջինիս վարչակազմի արտաքին քաղաքական հարցերի պատասխանատուն է, բայց այդ դեպքում հարց է առաջանում՝ Մամեդյարովն ի՞ր, թե՞ Իլհամ Ալիեւի գնահատականն է հնչեցրել:**

**Իրավիճակի մեջ փորձեց պարզություն մտցնել փոխարտգործնախարար Ազիմովը՝ հայտարարելով, որ Ադրբեջանը սկզբունքորեն համաձայնել է միջնորդների առաջարկություններին, բայց անմիջապես էլ վերապահում արեց, որ իրենք «սպասում են Հայաստանի մտածողության փոփոխությանը»: Որ մտահանգումը բանականության հետ հեռավոր առնչություն չունի, ակնհայտ է, քանի որ Հայաստանի բանակցային մտածողությունը կառուցվում է «մադրիդյան սկզբունքների», այն է՝ համանախագահների առաջարկության վրա, որը եթե Ադրբեջանն էլ ընդունում է, ապա Ազիմովի սպասումները լիովին անտրամաբանական են:**

**Այսպիսով, պարզ է, որ հերթական անգամ Ադրբեջանը կանգնած է երկընտրանքի առաջ. գնա՞լ, թե՞ չգնալ խաղաղ կարգավորման: Ծանրության նժարն, իհարկե, թեքվում է «չգնալու» տարբերակին, բայց այստեղ էլ ծագում է նոր հարց. «Ինչպե՞ս պատճառաբանել»:**

**Պաշտոնական Բաքուն քննադատության սլաքն ուղղել է համանախագահ երկրներից հատկապես Ֆրանսիային, իսկ առհասարակ՝ միջազգային միջնորդներին: Ֆրանսիային մանդատից «զրկելու» գաղափար հնչել է Ադրբեջանի խորհրդարանում: Առիթն այդ երկրի Ազգային ժողովի պատգամավոր Ռոշբլուանի այցն էր ԼՂՀ: Բայց ադրբեջանական հիստերիան վկայում է, որ Իլհամ Ալիեւը խնդիր է դրել, որ Մինսկի խմբի համանախագահության նկատմամբ ձեւավորվի «անվստահություն»: Ընդդիմության վրա արդեն հույս դնել անհնար է՝ նրանց ոչ ոք չի հավատա, եթե ասի, որ Հայաստանի հետ համաձայնության գալու դեպքում ներքաղաքական սրացումներ կլինեն, ուստի մնացել է «հանրային լայն դժգոհության գործոնը»:**

**Հնարավո՞ր է օգտագործել այդ խաղաքարտը:**

**Այլ հանգամանքներում՝ գուցե, բայց այսօր՝ հազիվ թե, քանի որ «մադրիդյան սկզբունքները» պետք է որ հիմնականում բավարարեն ադրբեջանական հանրությանը: Համենայն դեպս, միջնորդներն իրավունք ունեն կասկածելու Ադրբեջանի անկեղծությանը, եթե Բաքուն փորձի այդ կերպ սառեցնել բանակցային գործընթացը: Այդ իսկ պատճառով Իլհամ Ալիեւն ընտրել է «պահեստային տարբերակ»: Կառավարող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Ահմեդովը բարձրացրել է Մինսկի խմբում «պարիտետ ստեղծելու» հարցը: Ըստ Ահմեդովի՝ համանախագահ երկրներից ոմանք կամ մեկը «պաշտպանում է (են) Հայաստանի դիրքորոշումը», ուստի հարկ է, որ Թուրքիան նույնպես ստանա համանախագահության մանդատ: Եզրակացությունը պարզ է՝ որպեսզի «Թուրքիան էլ պաշտպանի Ադրբեջանի շահը»:**

**Ահմեդովն, իհարկե, ներկայացնում է իր իսկ անմիջական շեֆին՝ Իլհամ Ալիեւին, որը բազմիցս է հավաստիացրել ադրբեջանական հանրությանը, որ համանախագահ երկրներն ընդունում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ուստի «Հայաստանն այլ ելք չունի, քան համակերպվել իրողություններին»: Ստացվում է, որ երկրի նախագահը տարիներ շարունակ խաբե՞լ է ժողովրդին: Երկու ճշմարտություն չի լինում՝ կամ Իլհամ Ալիեւն է ստում, կամ՝ Ալի Ահմեդովը:**

**Բայց կա մի նրբություն. «մադրիդյան սկզբունքները», հավանաբար, ենթադրում են Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարգում, բայց՝ առանց Լեռնային Ղարաբաղի եւ հարակից որոշ տարածքների: Քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն, մասնավորապես, կարծում է, որ ենթադրվում է «Ադրբեջանին վերադարձնել հինգ-վեց շրջան, փախստականների վերադարձ, կոմունիկացիաների գործարկում եւ ԼՂ կարգավիճակի ճշտում հանրաքվեի միջոցով»: Ալիզադեն համարում է, որ հայկական կողմը պնդում է, որպեսզի նախնական համաձայնության մեջ ներառնվի նաեւ հանրաքվեի անցկացման ժամկետը, իսկ Ադրբեջանը համարում է, որ այդ խնդիրը «պետք է ապագայում լուծվի»: Ըստ քաղաքագետի, ներկա փուլում տարաձայնությունների առանցքը դա է:**

**Խոսել Թուրքիայի՝ ՄԽ համանախագահ դառնալու նպատակահարմարությունից, նշանակում է ակնհայտորեն ակնարկել բանակցությունները տապալելու ցանկության մասին, որովհետեւ ոչ միայն Հայաստանը, այլեւ իրենք՝ ներկա համանախագահները չեն ընդունի այդ գաղափարը: Առանց այդ էլ Թուրքիան բավական «խորացել է» Հարավային Կովկասի հարցերում, ինչը, բնականաբար, չի պատշաճում այդ երկրի ո՛չ միջազգային հեղինակությանը, ո՛չ հնարավորություններին:**

**Մնում է պարզապես հուսալ, որ Իլհամ Ալիեւը իր մեջ բավարար ուժ կգտնի՝ անցնելու այն ճանապարհը, որ իր համար նախագծել է «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւը: Չէ՞ որ հենց նա է երկրի խորհրդարանում անցկացված քննարկումներում խոստովանել, որ անմտություն է կարծել, թե Լեռնային Ղարաբաղը կհամաձայնի վերադառնալ այն կարգավիճակին, որ ունեցել է Խորհրդային Ադրբեջանի կազմում: Հայր Ալիեւը չկարողացավ մինչեւ վերջ գնալ, որովհետեւ որդուն նախագահ դարձնելու գերխնդիր ուներ: Որդին այդ ցավից ազատ է այնքան ժամանակ, քանի դեռ չի հասել հոր, իսկ կրտսեր Հեյդար Ալիեւը՝ նախագահական հավակնությունների տարիքին:**

# Հայաստանի հեռուստատեսությունը arte-ի եթերում

***«Ասա՝ ինչ ես դիտում, եւ կասեմ՝ ով ես դու»: Այս ձեւակերպումը ֆրանս-գերմանական arte հեռուստաալիքինն է. ամեն շաբաթ ականջիրներին հրամցվող, աշխարհի տարբեր երկրների հեռուստատեսային դաշտի մասին պատմող «Միջազգային ալիքները փոխելիս» հաղորդաշարը հունիսի 6-ին, ժամը 7.30-ին մեզ քնից զրկող մի վերնագիր ուներ՝ Հայաստանի հեռուստատեսությունը: Ռեժիսոր Ֆրեդերիկ Տոննոլիի 2007-ին հեղինակած 26 րոպեանոց ֆիլմի կրկնությունը կարելի է դիտել հունիսի 22-ին, եվրոպական ժամանակով 04.30-ին: Բայց մինչ այդ ներկայացնենք ֆրանսիական սուր տեսողությամբ նկարահանվածը՝ մեր կիսարթուն հայացքով:***

3 միլիոն բնակչություն ունեցող լեռնային երկիրը կարող է 45 ազգային, շրջանային եւ տեղական ալիքներ ունալ: Այստեղ էլ, ինչպես աշխարհում համարյա ամենուր, կարող եք «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր», «Աստղեր» («Հայ սուպերսթար»), առավոտյան «Բարի լույս» ծրագրերը դիտել: Լատինամերիկյան հայերեն հնչյունավորված սերիալների կողքին «Շանթ» հեռուստաընկերությունը ցուցադրում է նաեւ հայկական միակ «Վերվարածները ընտանիքում» հեռուստանովելը: «Մենք Հայաստանի կյանքն ենք ցույց տալիս՝ հումորով: Մեր սերիալը դիտում են նաեւ երեխաները», ամեն օր երեւանյան բնակարաններից մեկում նկարահանվող իրենց սերիալի մասին է պատմում Հունան Սողոյանը:

Գյուղում աշխարհին նայելու մի պատուհան ունեն՝ մի ալիք են դիտում: «Իմ սերիալը բաց չեմ թողնում, տրամադրությունս փոխվում է, երբ էկրանին տեսնում եմ՝ ոնց են համբուրվում, ես էլ ինձ երիտասարդ եմ զգում», հայերեն թարգմանված «Մարիաննայի» մասին կարծիք է հայտնում մի գյուղացի:

«Հիմա էլ, ինչպես նախկինում, կենտրոնում միշտ ՀՀ նախագահն է, «Հայլուր» լրատվականի մասին կարծիք է հնչեցնում ֆիլմի հեղինակը՝ ձայն տալով նաեւ հաղորդավար Սոնա Թորոսյանին:

Հետո կադրում մեկ ուրիշ լրագրող է կարծիք հայտնում՝ Արզուման Հարությունյանը:

Հայաստանյան եթերում շատ են երիտասարդները: Կա լուրջ գրաքննություն: Եվ որ ավելի վատ է՝ կա ինքնագրաքննություն՝ լրագրողները չեն կարողանում իրենց ազատություն տալ: «Ազատ լինել ինչի՞ց. սա մեր երկրում ոչ ոք դեռ չի հասկացել: Երբ մեր եթերը կտրեցին, հենց հաջորդ օրը մարդիկ փողոց ելան՝ պահանջելով մեզ վերադարձնել», «Ա1 պլյուսի» մասին ասում է Մելս Մովսիսյանը:

Բայց կա մի ոլորտ, որ զերծ է գրաքննությունից: Եկեղեցին է՝ իր «Շողակաթ» հեռուստատեսությամբ, ուր 60 եկեղեցական է եթեր դուրս գալիս: Ուղիղ հեռախոսակապով կարելի է հարց ուղղել Տաճատ քահանա Դավիթյանին: Վերջինս դժգոհ է. «Սերիալները վատ ազդեցություն են թողնում՝ նայեք մեր աղջիկներին», ասում է քահանան: «Շողակաթի» աղավնիները կամ չունեն փողոցի աղջիկների հագուկապի հետ՝ շղթայից խաչի փոխարեն դոլարի նշանն է կախված:

Ցեղասպանություն, երկրաշարժ... սեպտեմբերի 21-ին անկախություն ստացած երկրի ավերված տնտեսությանն ավելացել է նաեւ տնտեսական էմբարգոն:

«Խաչմերուկ» ծրագրում Սուրենը ավտոմեքենաների վաճառքով է զբաղվում: Եկամտաբե՞ր է աղքատության շեմը չհաղթահարած երկրի համար:

Իհարկե՝ օլիգարխները լավ մեքենաներ են քշում, նրանց մեծաքանակ թիկնազորը՝ նույնպես, բացատրում է հեռուստահաղորդման հեղինակը:

Հարավային Կովկասի գյուղերում մարդիկ հյուրասեր են: Հայաստանյան այս գյուղում էլ կանայք լավաշ են թխում, տղամարդիկ իրենց ամենալավ մսացուն՝ խոզն են մորթում: «Բայց ժամը 18-ին զբաղված եմ, իմ սերիալն է սկսվում, հետո կգամ, կշարունակեմ», ասում է Սամվելը: Նրան ոչ ոք չի կարող խանգարել: «Կինը նստի հեռուստացույց նայի, տղամարդը նրան ծառայի՞. հայկական ընտանիքներում չկա նման բան», բացատրում է Սամվելը: Իսկ սերիալից հետո սկսվում է ավանդական հյուրասիրությունը:

Կանայք էլ իրենց սիրելի հաղորդումն ունեն՝ «Բարի լույս, Հայաստան»-ը, որ Հ2-ով Նարինե Թուխիկյանն է վարում:

Հայաստանում երաժշտության պակաս չկա. 200 թեկնածու է կանգնած հայ երգը ներկայացնելու համար, «Շանթի» «Ժողովրդական երգիչ» նախագծի մասին է պատմում Սեդրակ Դավթյանը:

Ամուսնուն ղարաբաղյան պատերազմում կորցրած Մարգարիտը, սակայն, իր երեկոն հագեցնում է «Հայ սուպերսթարով»: «Մեր երեխաները շատ տխուր մեծացան, մութ, ցուրտ տեսան, հասկանում եմ, որ նրանք արեւմտյան երաժշտության ուրախ հնչյուններն են նախընտրում», իր դիտած հաղորդմանն է անդրադառնում Մարգարիտը:

Հայ երիտասարդությունը ավանդականի եւ մոդեռնի միջեւ է, եւ նրանց հայացքը սարերից ու սահմաններից հեռու է սլանում:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Գները Լոս Անջելեսում. գրեթե... զավեշտալի

Հայաստանցիներիս մեջ արմատավորված կարծիք կա, թե ԱՄՆ-ի գյուղարտադրանքը բանի պետք չէ, այն ինչ-ինչ արհեստական միջոցներով աճեցված սնունդ է: Իմա՝ դրանով է պայմանավորված նաեւ ամերիկացիների չափից դուրս գիրությունը:

Այս տարվա ապրիլ-մայիս ամիսների 5 շաբաթներին Լոս Անջելեսում անցկացրածս շրջանում ես այդ կարծիքի քիչ թե շատ հավաստիության նշմարելի ապացույցների չհանդիպեցի: Անգամ 1970-ականներին ԱՄՆ մեկնած ուսանողական ընկերներս, ովքեր պետք է որ արդեն ամերիկացած լինեին, 70-ամյա հասակում էլ ձիգ էին ինչպես 30-ամյա տարիքում: Վստահեցնում եմ, որ նրանք այդ 4 տասնամյակների յուրաքանչյուր օրը սնվել են իրենց մոտակա առեւտրի օբյեկտներում վաճառվող մսով ու մսամթերքներով, կաթով ու կաթնամթերքներով, բանջարեղենով ու մրգերով: ԱՄՆ-ում հայտնված մեր հայրենակիցների կենցաղի գովք է ստացվում, սակայն փաստ է, որ նրանց խոհանոցի պարտադիր բաղկացուցիչ մաս են կազմում խորոված ու լանգետի, ստեյկի ու համբուրգերի պատրաստման սարքերը: Գեր ամերիկացիների անշուշտ կարելի է հանդիպել, ովքեր, այսպես որակենք, մարդ արարածի իր հանդեպ անփույթ գտնվող տեսակն է, որի ներկայացուցիչներին մենք շատ ավելի հաճախ ենք հանդիպում աղքատ համարվող հայաստանյան իրականությունում: ԱՄՆ-ում օրգանիկ պիտակներով սննդի էլ կարելի է հանդիպել, որոնք վաճառվում են հազվադեպ հանդիպող առեւտրի օբյեկտներում, որոնք մի քանի անգամ թանկ արժենալով հանդերձ, շատ էլ չեն գրավում դոլարի պակաս չունեցող հարյուր հազարավոր լոսանջելեսահայերի, ինչու չէ՝ նաեւ ամերիկացիների ուշադրությունը:

Այսուհանդերձ. ինքներս մեզ հարց տանք, թե որտեղի՞ց է առաջանում ԱՄՆ-ի հարստությունը, երբ միսն ու մսամթերքը, կաթն ու կաթնամթերքը, բանջարեղենն ու մրգերը անսահմանափակ քանակներով հասու են թե՛ 300 տարի այստեղ բնակվող մարդկանց ժառանգներին, թե՛ ընդամենը 2-3 տասնամյակ առաջ երկրում հաստատվածներին: Հայաստանցիներից նրանք, ովքեր այս պահին հիշատակելու են ԱՄՆ-ի քաղաքականության մեջ նավթային գործոնը, հիշեցնեմ, որ գյուղոլորտի խնդիրներում այն գրեթե դեր չունի: Փոխարենը ԱՄՆ-ի հարստության ստեղծման գործընթացում վճռորոշ դեր ունի մի մշակաբույս, որի մասին նրանք գերադասում են անգամ ցածրաձայն չխոսել: Կոնկրետ Հայաստանում ներկայանալով «Վայելիր Ամերիկայի ոգին» գովազդով, որն ընդամենը ծխախոտի մասին է, նրանք այդ մշակաբույսի թե՛ համաշխարհային արտադրության, թե՛ արտահանման 40 տոկոսը մշտապես իրենց մենաշնորհին են դարձրել. խոսքը եգիպտացորենի հատիկի մասին է, մեզանում հանրահայտ կուկուռուզի: Տեսեք. ըստ ԱՄՆ-ում լույս տեսնող «Համաշխարհային թվեր ու փաստեր. 2009 թ.» տեղեկատուի, 2007 թվականին ԱՄՆ-ում այս մշակաբույսի հատիկի արտադրությունը կազմել է 332 մլն տոննա, համաշխարհայինը՝ 785 մլն տոննա: 2000 թվականի ցուցանիշները հետեւյալներն են. 252 մլն տոննա եւ 592 մլն տոննա: Թե ինչու են ամերիկացիները նման աճ ապահովում, պարզվում է այլ երկրներում ընթացող զարգացումներին մասնակիորեն ծանոթանալու արդյունքում: Եգիպտացորենի հատիկի արտադրությամբ 2-րդը համարվող Չինաստանում 2000 թ. արտադրվել է 106 մլն տ, 2007-ին՝ 152 մլն տ, 3-րդ տեղում գտնվող Բրազիլիայում համապատասխանաբար 32 մլն տ եւ 52 մլն տ: Հայաստանցիներս ամեն օր ենք նկատում այս զարգացումների արդյունքները. հիշյալ երկրները մեր առեւտրի, սպասարկումների ու վերամշակման հաստատությունները ուղղակի հեղեղել են իրենց տավարի, խոզի ու թռչնի մսի տեսականիներով, որոնք ՀՀ հասցվելով հազարավոր կիլոմետրեր հեռավորություններից, շատ ավելի մատչելի գներով են վաճառվում, քան մեր մի բուռ երկրում արտադրվողները: Ըստ Չինաստան այցելած մի ծանոթիս, այստեղ մսի 1 կգ-ը վաճառվում է 6-7 յուանով, երբ 8 յուանը 1 դոլար է: Գներն արտակարգ ցածր են նաեւ Բրազիլիայում: Ինչո՞ւ է հայաստանցի գնորդը վայ մեզ վիճակում հայտնվում:




Ինչո՞ւ, պարոնայք ՀՀ տնտեսության պատասխանատուներ: Շաբաթ չի լինի, որ հիշատակված երկրներ ազդեցիկ պաշտոնյաներից կազմված պատվիրակություններ չուղարկեք կամ նրանց ներկայացուցիչներին չընդունեք: Ինչո՞ւ չեք այցելած երկրներում, ասենք՝ ԱՄՆ-ի պարագայում հարցնում, թե ինչի՞ց է, որ իրենց տավարի փափուկ գերազանց որակի մսի 1 կգ-ը կարելի է գնել 3,2-3,4 դոլարով, որը համարժեք է 1200-1400 դրամի, երբ մեր տեղականը զգալիորեն թանկ է: Թռչնի մսի 1 կգ-ի արժեքը սկսվում է 1 դոլարից, երբ մեր տեղականը 3,5 դոլարից ավելի է: Վստահեցնում եմ, որ հասուկ մատչելի խանութների գովազդից չէ, որ բերում եմ այս օրինակը (տես նկարը):

Տրված հարցի պատասխանը բոլորովին էլ բարդ չէ, եթե չասեմ՝ պարզագույն է, որը լավագույնս յուրացրել են ոչ միայն արդեն հիշատակված չինացիներն ու բրազիլացիները, այլեւ 100 եւ ավելի բարեկեցիկ ապրող երկրներ: Եգիպտացորենն այն մշակաբույսն է, որի 1 կգ սերմից գրեթե 1 տ հատիկի բերք է ստացվում, որպիսին մոտ ցուցանիշ արձանագրում են նաեւ Հայաստանում այն մշակող հատուկենտ ֆերմերներ: Այս բույսը պարունակում է ամենաբարձր կերամիավոր, 1,33 կկալ: Այն հիմնականում որպես անասնակեր օգտագործելուց է, որ խոշոր կենդանիների օրը 1000-1200 գրամ քաշաճ է ապահովվում, կթուների՝ տարեկան 8000-12000 լիտր կաթնատվություն: Նման արդյունքներն էլ հենց պայմանավորում են դրանց գները, որոնք ամերիկացիները երբեւէ էժան չեն որակում, այլ՝ իրենց մատչելի: Թերեւս հիմնական այս սննդատեսակների գներով են կազմավորվում նաեւ այլ գյուղարտադրանքների գները, որոնցից նկարում պատկերված են թարմ պիտակով ներկայացված սոխն ու խնձորը, առաջինի 4,5 կգ-ը 1 դոլար է, խնձորի 2,3 կգ-ը՝ 1 դոլար: Հայաստանում կենդանիների օրական 350 գրամ քաշաճ եւ 3000 լիտր կաթնատվություն գյուղոլորտի բարձրաստիճան մասնագետները նախատեսում են 2015 թ., որին իրար հաջորդող ՀՀ կառավարությունները լռելյայն համաձայնվում են:

Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության պատասխանատուները, պաշտոնյաների մի հսկա բանակ, գերադասում են չտեսնելու տալ երկրում ընթացող անցանկալի գործընթացները, հողի հայ մշակի աշխատանքի գերցածր արդյունքները, որը նրան հուսալքության է հասցնում, ստիպում հրաժարվել իրեն անվարձահատույց հատկացված հայրենի հողի չափաբաժնից: Ինչ է թե՝ նրան հրամցվում է խաղող ու լոլիկ աճեցնելու գաղափարը, որից շատ ավելի օգտվում է դրանք մթերող-վերամշակողը, քան բուն արարողը: Ճշմարտության դեմ չմեղանչելու առումով նշենք, որ 2007-2008 թթ. գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում որոշակի դրական զարգացումներ ծավալվեցին, ՀՀ կառավարությունը եգիպտացորենի աճեցման խթանման նպատակով 100 միլիոնավոր դրամների հատկացումներ իրականացրեց, միջոցառումներ ձեռնարկվեցին համապատասխան տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Սակայն տարօրինակորեն այս գործընթացը կարճ տեւեց, 2008-ի կեսերից շարունակություն չունեցավ: Հերթական ինչում ինչեցնենք. ո՞ւմ է ձեռնտու ՀՀ 1,2 մլն գյուղական բնակչության աշխատանքի արդյունավետության բարձրացումը, որը ողջ աշխարհում պետականանպաստ հիմնարար գործընթաց է համարվում, մարդկանց կապում իրենց հողին ու երկրին, խթանում ողջ տնտեսության զարգացումը: Փոխարենը ո՞ւմ է ձեռնտու երկիրը ներկրումների միջոցով պահելը, գները շարունակաբար բարձրացնելը, որը համազգային ողբերգության է վերածվում:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**2006-2008 թթ. ՀՀ գյուղնախարարի խորհրդական**

# Էրդողանը հարձակումների թիրախ՝ երկրից ոչ մահմեդականների վտարման մասին խոստովանելու համար

## *Անկախ դրդապատճառներից, դա Թուրքիայում նպաստում է եւս մեկ տաբուի վերացմանը*

Մայիսի 23-ին Դյուզջե գավառում ելույթ ունենալով իր կուսակիցների առջեւ, Թուրքիայի վարչապետ, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ասել է. «Տարիներ շարունակ մեր երկրից տարբերաբար վտարվել են նրանք, ովքեր էթնիկապես այլ ինքնություն են ունեցել: Իրականում դա ֆաշիստական մոտեցման հետեւանք էր»: Էրդողանի հայտարարությանը մայիսի 24-ի համարներում անդրադարձել էին թուրքական կենտրոնական թերթերը, մասնավորապես՝ «Ռադիկալը», իսկ մայիսի 26-ին՝ նաեւ «Ազգը»:

Էրդողանի հայտարարությունը բուռն հակազդեցություն էր առաջացրել ընդդիմության շրջանակներում: Իթթիհատականների իրավաժառանգորդ, Քեմալ Աթաթուրքի հիմնադրած Ժողովրդա-հանրապետական կուսակցության փոխնախագահ, նախկին դեսպան Օնուր Օյմենը ձեռնամուխ էր եղել արդարացնելու Թուրքիայից թուրքական ինքնություն չունեցող քաղաքացիների վտարումը: Նա, «Թարաֆ» թերթի մայիսի 25-ի համարի վկայությամբ, նշել է. «Չհասկացա, թե ի՞նչ էր ուզում ասել վարչապետը: Երկրից էթնիկ այլ խմբավորման պատկանողների վտարման մասին չէինք լսել, վարչապետին վայել չէ իբրեւ իրողություն ներկայացնել այն, ինչը չի կատարվել»:

Հաջորդ օրը Օյմենին ձայնակցել էր «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության փոխնախագահ Օքթայ Վուրալը: Նա, դիմելով Էրդողանին, ինչպես մայիսի 26-ին նշել էր «Ռադիկալը», հարցրել է. «Սեւրի ժամանակահատվածի կարոտախտո՞վ եք տառապում: Մեր ազգը պատմության ոչ մի շրջանում ազգայնամոլություն չի դրսեւորել: Վարչապետը խոսում է Օրհան Փամուքի լեզվով»:

Օյմենը եւ Օքթայը վարչապետ Էրդողանի վրա հարձակվելիս նրա հայտարարությունը համարում էին անհավասարակշիռ, ակնարկելով, որ այդպիսին է նաեւ ինքը: Հիրավի, Էրդողանն անհավասարակշիռ հայտարարություններ անում է: Օրինակ՝ մայիսի 14-ին Լեհաստան այցելության ընթացքում նշելով Թուրքիայում ապօրինաբար աշխատող 40 հազար հայաստանցիների մասին, ասել էր. «Անհրաժեշտության դեպքում սրանց հետ կուղարկենք»: Մարտի 12-ին նա Հաֆֆյարիում, ակնարկելով քրդերի մասին, հայտարարել էր. «Երկրում մեկ ազգ է, մեկ լեզու, ով չի հավանում՝ թող գնա»:

Անհավասարակշիռ հայտարարությունների առումով ավելի քան անփառունակ էին գտնվել Թուրքիայի վարչապետի նախարարները: Նրանցից պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը 2008-ի նոյեմբերի 10-ին Գերմանիայում ասել էր. «Եթե հայերն ու հույները շարունակեին (գոյատեւել) երկրում, մի՞թե մենք այսօր կունենայինք ազգային այսպիսի պետություն»:

Մարտի 30-ին պետնախարար եւ կառավարության խոսնակ Ջեմիլ Չիչեքը, մեկնաբանելով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, Իգդիրում քրդական «Ժողովրդավարական հասարակարգ» կուսակցության հաղթանակի առնչությամբ մասնանշել է. «Իգդիրն էլ առել են: Այսինքն՝ հասան Հայաստանի սահմանին»: Նա դրանով ձեռքի տակով բացի քրդերից, հարձակում էր գործել նաեւ հայերի վրա:

Ընդ որում, վարչապետ Էրդողանը էթնիկ այլ խմբավորումների երկրից վտարման փաստն արձանագրում էր ոչ թե կատարվածի համար զղջալու կամ պատմական անարդարությունը սրբագրելու մղումով, այլ Սիրիային սահմանամերձ շրջանների ականազերծման աշխատանքները իսրայելցիներին հանձնարարելու շուրջը երկրում անախորժ աղմուկ բարձրացրած ընդդիմության հարձակումներից պաշտպանվելու համար:

Սահմանամերձ շրջաններում ականազերծման աշխատանքների հանձնարարումն իսրայելական ընկերությանը այդ դեպքում, երբ ականազերծման տարածքը 40 տարով թեկուզ գյուղատնտեսական նպատակների համար տնօրինելու է նույն ընկերությունը, միանշանակ չի ընդունվում տարածաշրջանում: Սիրիան եւ Իրանը դեմ են դրան, սակայն Ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունների խնդիրը տարածքը չէ, ոչ էլ իսրայելական ընկերությունը, այլ երկրի քրդաբնակ հարավարեւելյան շրջանները իսրայելցիներին հանձնելու պատրվակով վարչապետ Էրդողանին ու նրա «Արդարություն ու բարգավաճում» կուսակցությանը վարկաբեկելը:

Թերեւս այդ առումով հասկանալի էին Էրդողանի՝ հունիսի 7-ին Կեսարիայում, կուսակցության նահանգային կոնգրեսում Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Դենիս Բայքալին հասցեագրած խոսքերը. «Չարանենգությունն այն աստիճանի է հասել, որ հարց են տալիս. «Երջանկահիշատակ Աբդուլ Համիդը Իսրայելին տարածք չէր տրամադրել: Ի՞նչ կասի նա, եթե բարձրանա գերեզմանից»: Դու ե՞րբ ես Աբդուլ Համիդի ոգով գործել, որ նրա անունն ես տալիս: Որտե՞ղ էիր Գազայի ռմբակոծման օրերին, երբ ես Դավոսում (ակնարկում է Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին հանդիմանելու մասին) վերին աստիճանի մարդասիրական մոտեցում ցուցաբերեցի, Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավորները լացուկոծ դրեցին, թե ի՞նչ է լինելու Իսրայելի հետ մեր հարաբերությունների վիճակը: Դուք ժամանակին բազում պայմանագրեր եք կնքել Իսրայելի հետ, սակայն իմ դաստիարակությունը թույլ չի տալիս բացահայտել դրանք»:

Անկախ դրդապատճառներից, վարչապետ Էրդողանի «էթնիկ այլ ինքնություն ունեցողների երկրից վտարման, իսկ վտարումը ֆաշիստական մոտեցման հետ նույնացնելու» հայտարարությունը ոչ այլ ինչ է, քան Հայոց ցեղասպանությունն իրագործած իթթիհատականների էթնիկ զտման քաղաքականության քեմալականների՝ ժամանակակից Թուրքիայում յուրացման խոստովանություն:

Անկարայի համալսարանի քաղաքագիտության պրոֆ. Բասքըն Օրանը հունիսի 8-ին Կ. Պոլսո «Հայ թերթ» կայքէջում նշելով էթնիկ զտման մասին, ընդգծում է, որ Էրդողանի հայտարարությամբ երկրում վերանում է եւս մեկ տաբու եւ նոր ժամանակաշրջան է բացվում, որովհետեւ այլեւս անհնար է լինելու շարունակել ոչ մահմեդականների էթնիկ զտումը Թուրքիայի Հանրապետությունում: Հեղինակը զտման ուշագրավ օրինակներ է բերում հոդվածում, սակայն դրանց մասին՝ առաջիկայում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Վենեսուելայում արգելվեց Coca-Cola-ի դիետիկ արտադրանքը

Վենեսուելայի իշխանություններն արգելք են սահմանել Coca-Cola ընկերության դիետիկ արտադրանքի վրա, որը թողարկվում է Coke Zero ապրանքանիշով: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Երկրի առողջապահության նախարար Խեսուս Մանտիլյան լրագրողների հետ զրուցելիս որոշումը պարզաբանել է նրանով, որ Coke Zero-ն վտանգ է ներկայացնում մարդու առողջության համար: Նախարարը չի մանրամասնել, թե հատկապես որ բաղադրատարրերն են վտանգավոր:

Իշխանությունները որոշել են, հանուն երկրի բնակչության առողջության, Coke Zero-ի բոլոր շշերը անմիջապես հանել վաճառքից:

Coca-Cola ընկերությունն առայժմ պաշտոնական մեկնաբանություն չի արել, հաղորդում է Ռոյթերը: Coke Zero անալկոհոլ ըմպելիքը Վենեսուելայի խանութներում առաջին անգամ հայտնվել էր 2009-ի ապրիլին: Արտադրող ընկերությունը հավաստիացնում է, թե ըմպելիքը չի պարունակում շաքար եւ կալորիաներ:

Սա Coca-Cola ընկերության նկատմամբ նախագահի Ուգո Չավեսի ընդունած առաջին արմատական որոշումը չէ: Դեռ մարտի վերջերին Չավեսը ամերիկյան ընկերությանը երկու շաբաթ ժամանակ էր տվել մայրաքաղաք Կարակասի կենտրոնում զբաղեցրած հողատարածքն ազատելու համար: Նա ձեռնարկության աշխատակիցներին հանձնարարել էր իրենց «ավտոմեքենաների հետ տեղափոխվել ծայրամաս»:

ԱՄՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Մոսկվան կասկածում է Գեյթսի խոսքերի ճշգրիտ վերարտադրությանը

**Երեկ «Ազգը» գրեց Սենատում ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսի արած այն հայտարարության մասին, թե չի բացառվում ամերիկյան հակահրթիռային համակարգի տեղաբաշխումը Ռուսաստանի տարածքում: Այդ հաղորդումը հրապարակել էին ամերիկյան լրատվական գործակալությունները եւ մասնավորապես Ասոշիեյթեդ պրեսը:**

**Ռուսաստանի արտգործնախարարությունը հրաժարվել է ծավալուն մեկնաբանություն անել Գեյթսի ելույթի կապակցությամբ: Սակայն ՌԴ ԱԳՆ տեղեկատվության եւ մամուլի վարչության պետ Անդրեյ Նեստերենկոն մոսկովյան «Կոմերսանտ» թերթի թղթակցին հայտարարել է, որ գերատեսչությունը նախ պետք է վերլուծի Ռոբերտ Գեյթսի ելույթը: Նեստերենկոն ենթադրություն է արել, թե Արեւմուտքի լրատվական գործակալությունները ըստ երեւույթին սխալ են վերարտադրել ԱՄՆ պաշտպանության նախարարի խոսքերի իմաստը:**

**ԱԳՆ ներկայացուցիչն ավելացրել է, որ Լեհաստանում եւ Չեխիայում ամերիկյան հակահրթիռային համակարգի օբյեկտների տեղաբաշխման այլընտրանքի քննարկման ժամանակ ռուսաստանցի դիվանագետները «կարող էին արտահայտված լինել զանազան տարբերակների օգտին»:**

**Սա նշանակում է, որ Մոսկվան ոչ թե հիմնովին ժխտում է Գեյթսի խոսքերը, այլ դրանց մոտենում է որոշ վերապահությամբ, քանի որ քննարկումները շարունակվում են:**

**«Կոմերսանտը» մեջբերում է տարբեր փորձագետների կարծիքներ: Moscow Defense Brief հրատարակության գլխավոր խմբագիր Միխայիլ Բարաբանովը, օրինակ, վստահ է, որ Ռուսաստանը չի համաձայնի սեփական տարածքում ամերիկյան հակահրթիռային համակարգի տեղաբաշխմանը: Մինչդեռ ՌԴ պաշտպանության նախարարության Կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի նախկին տնօրեն, գեներալ-մայոր Վլադիմիր Դվորկինը ՌԴ-ում ամերիկյան ռադարի տեղադրումը համարում է միանգամայն հավանական:**



# Պենտագոնի աշխատակիցների ուղեւորությունների արժեքը վճարել են օտարները



**Ամերիկացի լրագրողների Center for Public Integrtity (CPI) միավորումը հետազոտություն է անցկացրել, պարզելով, որ 1998-2007 թվականները ընդգրկող ժամանակահատվածում օտար պետությունները եւ ընկերությունները վճարել են Պենտագոնի աշխատակիցների ուղեւորությունների արժեքը: Այդ մասին հաղորդվում է CPI-ի կայքէջում զետեղված մամլո տեղեկագրում:**

**Հետազոտության տվյալների համաձայն, հիշյալ տասնամյակում օտարերկրացիները հովանավորել են ԱՄՆ ռազմական գերատեսչության աշխատակիցների 22 հազար ուղեւորություն, ընդհանուր առմամբ վճարելով 26 մլն դոլար:**

**Հրապարակված փաստաթղթում նշվում է, որ առավել մեծ թվով ուղեւորությունների համար վճարել են բուժական հատվածի ընկերությունները՝ ավելի քան 10 մլն դոլար: Իսկ ուղեւորություններ կատարած անձանց մեջ զգալի թիվ են կազմում զինվորական դեղագործները եւ բժիշկները:**

**Ուրիշ հատվածներում ուղեւորությունները հովանավորած հայտնի ընկերությունների թվում են Nike-ը, Skechers-ը, Mattel-ը եւ Sony-ն:**

**Ամերիկացի զինվորականների ուղեւորությունների արժեքը վճարած գլխավոր պետություններն են Ավստրալիան, Սինգապուրը եւ Ճապոնիան: Սակայն, ինչպես նշում են հետազոտության հեղինակները, ֆինանսական ներարկումներ են կատարել նաեւ Չինաստանը, ԱՄԷ-ն եւ Ռուսաստանը:**

**CPI-ի հետազոտած ուղեւորությունները գաղտնի չեն եղել: ԱՄՆ դաշնային օրենքները չեն արգելում զինծառայողների ուղեւորությունները օտարերկրացիների հատկացրած միջոցներով: Սակայն զինվորականների գործողությունները վերահսկող մարմինները կարծում են, որ նման պրակտիկան կարող է հանգեցնել շահերի բախման:**

# Էդ. Միրզոյանի «Տարվա եղանակների» եւ վոկալ մյուս ստեղծագործությունների մեկտեղում

Էդվարդ Միրզոյանի «Վոկալ ստեղծագործություններ» գրքույկը երեք լեզուներով, նոտագրված, լույս է տեսել վերջերս ԳԱԹ հրատարակությամբ, որն ամփոփում է կոմպոզիտորի մեներգային եւ խմբերգային ստեղծագործությունները:

Գրքույկի՝ սփյուռքահայ երաժիշտ Շահան Արծրունու նախաբանում համառոտ անդրադարձ է կատարված կոմպոզիտորի կենսագրությանը, նրա երկարատեւ ստեղծագործական ընթացքի գնահատմանը՝ պետական եւ այլ պարգեւներին ու կոչումներին:

Միրզոյանի ստեղծագործական ժառանգությունը ծավալով այնքան էլ մեծ չէ: Շ. Արծրունու բնորոշմամբ դրանց հատուկ է «ուժեղ դրամատիզմն ու նուրբ քնարականությունը», իսկ «ձեւային կառուցվածքի եւ հնչյունային ձեւավորման» պատճառով դրանք նա համարում է նեոդասական:

Շ. Արծրունին անդրադառնում է Միրզոյանի վոկալ գործերից յուրաքանչյուր հորինվածքի պատմությանը, որի սկիզբը՝ 1939 թվականն էր, երբ նա գրեց «Ասում են, թե» ռոմանսը՝ Ավետիք Իսահակյանի բանաստեղծության տողերով, հաջորդը գրվեց մի քանի տարի անց, այս անգամ Ավ. Իսահակյանի «Երազ տեսա»-ն դարձավ երգ: Ապա եւ գրվեցին երգեր Ազատ Վշտունու, Վահան Տերյանի տեքստերով նաեւ ժողովրդական՝ «Գարնան երգ»-ի մշակումը, «Ֆեստիվալային վալսը» (Գ. Սարյան)՝ նվիրված Տաթեւիկ Սազանդարյանին, առաջին կատարողն էլ ինքը եղավ, «Վերհուշ» (Ս. Կապուտիկյան), «Հիմա հիշում եմ» (Ե. Չարենց): Ի դեպ, «Ֆեստիվալային վալսի» եւ «Վերհուշի» տեքստերը հետեւել են մեղեդուն:

Այս շարքում իր բնույթով, երաժշտական լուծումներով առանձնանում է վերջին ստեղծագործությունը, որ ստեղծվել է 10 տարիների ընթացքում: Կյանքի ավելի ուշ շրջանում Միրզոյանի հայացքը ուղղվում է հեռավոր արեւելք՝ չինական մշակույթին: 1996-2006 թվականներին կոմպոզիտորը չին միջնադարյան բանաստեղծների տեքստերի վրա ստեղծում է «Տարվա եղանակներ» կամ «Չինական ռոմանս» երգաշարը, որը սկզբունքորեն, երաժշտական ներքին կառուցվածքով տարբեր է նախընթաց շրջանի իր արվեստից: Այս երգաշարը առանձնակի սուր, խորհրդավոր մթնոլորտ ունի: Սա բխում է, անշուշտ, չինական պոեզիայի ընդհանուր փիլիսոփայությունից, տաղաչափական առանձնահատկությունից: *«Ակնհայտ է, որ կոմպոզիտորը նպատակ չունի չինական տարազով հայկական երաժշտություն մատուցել, ուստի եւ չի կիրառել ո՛չ չինական պենտատոնիկա լադը, ո՛չ չինական երաժշտության բնորոշ*



*այլ տարբեր: Երգահանը չի պատկերել լոտոս, այլ փոխանցել է այն, ինչ նա լսել է ծաղկից:*

*Այս տարաշխարհիկ բանաստեղծություններում կոմպոզիտորը շեշտադրում է ընդհանուր տրամադրությունը, համամարդկայինը, երկրային կյանքի հրանցիկությունը»*, գրում է Դանիել Երաժիշտը «Երաժշտական Հայաստան» հանդեսի 2006-ի 3-րդ համարում, իսկ Շահան Արծրունին՝ *«Մեղեդային լեզուն անկյունային է, ռիթմիկ բաբախյունը՝ ջղաձիգ, հարմոնիկ բառապաշարը՝ լարված եւ երաժշտական, կառուցվածքը՝ նոր: Տպավորությունն, այնուամենայնիվ, ապշեցուցիչ է»:*

«Տարվա եղանակներ» երգաշարը ընդգրկում է Բո Ցզյույի, Բու Պուի, Լի Բոյի եւ Չժան Կեցզյույի VIII-XIV դդ. գրված բանաստեղծությունները, որոնցից երեքը ռուսերենից թարգմանել է Դանիել Երաժիշտը, մեկը՝ «Գարուն» բանաստեղծությունը՝ Հենրիկ Սեւանը: Հայ կոմպոզիտորի ժամանակակից եւ չին բանաստեղծների միջնադարյան քերթողական եւ երաժշտական մտածողությունների այս խաչաձեւումը որպես երաժշտական հետաքրքրական հորինվածք, արդեն իսկ երեւույթ է:

«Տարվա եղանակներ» երգաշարը կոմպոզիտորը նվիրել է «Շարական» համույթի գեղղեկավար, ԵՊԿ դոցենտ Դանիել Երաժշտին, ում Միրզոյանը բնորոշում է որպես «հրաշալի երաժշտի եւ անսովոր մարդու»: Այս ստեղծագործության մտահղացման շարժառիթի մասին Դանիել Երաժիշտը «Երաժշտական Հայաստան» հանդեսում (2002) գրում է. *«Մի առիթով Էդ. Միրզոյանի տանն էի: Թեյ հյուրասիրեցին, զրույց ծավալվեց, խոսքը խոսք բերեց, «հասանք մինչեւ ճապոնիա»: Հիշատակեցինք «թեյի ծեսը», «քարե այգիները», Ստրավինսկու «ճապոնական երգերը»...*

*«Չինական պարիսպը» նույնիսկ չխոչընդոտեց մեր «մտքի թռիչքին» եւ «հայտնվեցինք» միջնադարյան Չինաստանում: Հիշեցինք բանաստեղծներ Լի Բոյին, Չզան Ցզիի եւ Մենխաո Յանի խոսքերով Մահլերի «Երգ հողի մասին» սիմֆոնիան...*

*Կոմպոզիտորին առաջարկեցի մի չնաշխարհիկ երգ ինքը գրի: Արտասանեցի Բո Ցզուիի «Գարուն»-ը ու խոստովանեցի, որ այս խոսքերով ժամանակին գրածս երգը ավելի շատ ուսանողական մի փորձ էր, մինչդեռ իր գրածը «իսկական» երգ կլինի: Եվ մինչեւ թուղթ ու մատիտ բերելը, ես արդեն գրել էի անձեռոցիկի վրա:*

***Գարուն/Գարուն, քո շնչից/ Ձյունը հալեց ու գնաց/ Վառ շողերից տակ հողը երերաց,/ Բայց անզոր ես դու,/ Գարուն, սիրելիս,/ Որ հալեցնես/ Ձյունը մազերիս:***

*Շատ չանցած մամուլում կարդացի, որ «Գարուն» երգը առաջին անգամ հնչել է Լոս Անջելեսում՝ Գեւորգ Հունանյանի կատարմամբ, դաշնամուրով նվագակցել է ինքը՝ հեղինակը:*

*Հետագայում կոմպոզիտորը ցանկացավ մի քանի երգ էլ ավելացնել՝ շարք ստեղծել: Այդ նպատակով Վարպետին տվեցի իմ թարգմանած (ռուսերենից) «Ամառ», «Աշուն», «Ձմեռ» չինական բանաստեղծությունները, նաեւ Լեոպոլդ Ստաֆի թարգմանած «Չինական ֆլեյտա» շարքից մի քանի նմուշ: Տվեցի ու ասացի, որ սպասում ենք մի նոր «Տարվա եղանակներ» շարքի՝ միրզոյանական վարկածի...»*:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՀԱՄԵՐԳՆԵՐ

# «Գոհարը» հանդես կգա Դամասկոսում եւ Հալեպում

«Գոհար» անսամբլի համերգները հայաշատ երկրներում հաճախական են ու չնայած դրան՝ սպասված: Երաժշտախմբի համերգային ծրագիրը կազմված է տասնամյակներով ճանաչում ունեցող սիրված երգերից: Այս կերպ կազմված համերգով «Գոհարը» օրերս հանդես է եկել Դամասկոսի օպերային թատրոնում, իսկ հուլիսի տասնվեցին եւ տասնյոթին Հալեպի պատմական բերդի ամֆիթատրոնում ելույթ կունենա: 1999 թվականի դեկտեմբերի 7-ին լիբանանահայ Գոհար Խաչատրյանի բարեգործությամբ Գյումրիում հիմնադրվեց Գոհար երաժշտանոցը, այնուհետեւ իրար հետեւից ստեղծվեցին նույնանուն երգչախումբն ու նվագախումբը, որն այսօր միավորում է 150 երաժիշտ, 15 երգիչ եւ 12 պարուհի: Անսամբլը կիպրահայ դիրիժոր, երգահան, մանկավարժ Սեպուհ Աբգարեանի ղեկավարությամբ վերջին տարիներին հանդես է եկել Լիբանանում, Կիպրոսում, Ռուսաստանում, Թուրքիայում, Միացյալ Նահանգներում եւ Կանադայում: Այն սփյուռքահայերի համար, ովքեր մոռացել են հայերեն տառերն ու երգերը, «Գոհարի» DVD-ները ծառայում են իբրեւ յուրօրինակ երաժշտական այբբենարան, քանի որ ներառում են հայերեն եւ հայերեն լատինատառ լուսագրեր ու տրամադրվում են հայկական դպրոցներին:

**Ն. Պ.**

ԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

# Ազատութիւն, որ լուսաւորում է աշխարհը

Իւրաքանչիւր ամսուայ առաջին հինգշաբթի երեկոյեան Կալիֆոռնիայի Հայ Գրողների Միութեան (ԿՀԳՄ) գրական դռնբաց նիստ է գումարւում Գլենդէլի հանրային գրադարանի սրահում, հանդիպում են գրողներ եւ գրասէրներ: Նրանք գալիս են մօտիկ եւ հեռու քաղաքներից գրական նիստերի եւ որեւէ նոր գրքի քննարկմանը ներկայ գտնուելու, կամ նոյնիսկ իրենց ստեղծագործութիւններից ընթերցելու համար, ի միոյ բանիւ իրենց գրական ծարաւին յագուրդ տալու նպատակով:

Յունիսի 4ի երեկոյեան ժամը 7ին Կալիֆոռնիայի Հայ Գրողների Միութեան հերթական հանդիպումն էր:

Միութեան նախագահ՝ բանաստեղծ Գրիշ Դաւթեանը բացումը կատարելով տեղեկացրեց նոր գրքի քննարկման մասին:

Քննարկւող գիրքն էր՝ «Ազատութիւն, որը լուսաւորում է աշխարհը, Ամերիկա» հեղինակ՝ Նիկոլայ Ստեփանեան (Անրի Բայրոն ):

Միութեան նախագահը սեղմ տողերի մէջ ներկայացրեց գիրքը, ապա գրքից կարդաց հեղինակի կենսագրութիւնը, այնուհետեւ ամբիոն հրաւիրեց գրական զեկուցաբեր՝ բանաստեղծ Գէորգ Քրիստինեանին, որը իր գրախօսական նախաբանով այսպէս սկսեց.

«Եթէ գրականութիւնը կեանքն է, ապա՝ կեանքը մի քիչ աւելի է, քան ե՛ւ գրականութիւնը, ե՛ւ արուեստը ընդհանրապէս: Կեանքի ամէն մի երեւոյթ կարող է դառնալ գրական նիւթ: Այս երեկոյի մեր գրական նիւթը, թեման, խորհուրդը ամերիկեան ֆենոմենն է, ազատութեան խորհրդանիշ արձանն է: Կոլումբոսի յայտնաբերումը, այն էլ շատ ուշ, բայց ասես երէկ էր, որ լոյս աշխարհ եկաւ այս զարմանալի մայրցամաքը, ամենատեսին աշխարհայայտնութիւնը, որը շուտով, շատ շուտով առասպելի հերոսի նման հզօրացաւ եւ յաւակնութիւն ունի համարուելու աշխարհի կենտրոնը»:

Այնուհետեւ զեկուցաբերը անդրադարձաւ գրքի պատմական եւ գրական արժէքներին իր խօսքն այսպէս եզրակացնելով. «Գիրքը գրուած է հրաշալի, պատկերաւոր հայերէնով, յուզական լիցքով, ճշմարտութեան խորհուրդով եւ հմուտ ամերիկագէտի զգաստ մտքով: Ողջունում եմ մեր հայրենակից մտաւորական հեղինակին, որից կարելի է սովորել Ամերիկայի ազատութիւնն ըմբռնելու այս պատեհութեան համար»:

Զեկուցաբերին յաջորդեցին տեսակէտների արտայայտութիւններ գրքի եւ հեղինակի մասին:

Պրն. Արմէն Աճէմեանը կարդաց իր հակիրճ եւ բովանդակալից գրութիւնը, վեր հանելով գրքի արժանիքները եւ հեղինակի այլ շնորհները: Հեղինակը միաժամանակ գեղանկարիչ է. սրահում ցուցադրւում էին նրա գեղանկար պաստառները, որոնք գրաւեցին դիտողների ուշադրութիւնը եւ արժանացան դրւատանքի:

Գրող Կիմա Կիրակոսեանը, բանաստեղծ Ալբերտ Գրքաշարեանը, բանաստեղծ Գարուշ Հարեանցը եւ մանկագիր Ֆիրա Ակեանը իրենց գնահատանքի խօսքն ասացին հեղինակին եւ արժեւորեցին նրա հրատարակած գիրքը, ներկաներին խորհուրդ տալով անպայման կարդալ այն:

Հեղինակը շնորհակալութիւն յայտնեց ԿՀԳ-ի վարչութեան, բոլոր արտայայտուողներին եւ խօսեց գրքի ծագման շարժառիթի մասին: Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

**Ռ. ԿՈՐԻԿ**
2009 Յունիսի 4,
Գլենդէլ, Լոս Անջելես

# Մշակութային արժեքների եւ մշակույթի պահպանումը բոլորիս պարտքն է

**Արագած եւ Արա լեռների դիմաց 4000 մետր բարձրության վրա կառուցված եռանկյունաձեւ հրվանդանի վրա վեր է խոյանում 7-րդ դարում կառուցված Ամբերդի համալիրը՝ Ամբերդ եւ Արքաշեն (Արխաշեն) գետերի միացման տեղում: Այն բաղկացած է պարսպից, դղյակից, բաղնիքից եւ եկեղեցուց, ինչպես նաեւ արտաքին պաշտպանական կառույցներից եւ դեպի կիրճը տանող սալածածկ զառիթույց: Կամսարականների օրոք կառուցված համալիրը 3-4 ամիս ծառայել է հայոց թագավորների ու իշխանների ամառային նստավայր: Իսկ երբ 1196-ին հայ-վրացական միացյալ զորքերն ազատագրում են ամրոցը՝ այն որպես սեփականություն հանձնվում է Զաքարյաններին: Երեկ մարդաշատ էր Ամբերդի շրջակայքը, որտեղ տեղի ունեցավ «Ճանաչե՛ք հայկական հուշարձանները», խորագիրը կրող ծրագրի հերթական շնորհանդեսը:**

**Ինչպես տեղեկացրին ԱՄԱՓ մշակութային հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, Ամբերդի բերդաքաղաքում եւ կիրճում տեղադրվել են հինգ լեզվով 7 բացօթյա վահանակներ, ինչպես նաեւ ճանապարհային ուղեցույց-ցուցանակներ: Շնորհանդեսին ՀՀ մշակույթի փոխնախարար Գագիկ Գյուրջյանը ներկաներին տեղեկացրեց համալիրի պատմամշակութային նշանակության եւ կարեւոր դերի մասին, ու նշեց, որ Ամբերդում ընթանում են լայնածավալ վերականգնողական աշխատանքներ: Վերականգնվում է պարիսպը, բարեկարգվում են դեպի հուշարձան եւ Ամբերդի կիրճ տանող ուղիները, կառուցվել է դիտահարթակ, զուգարան:**

**2008-ին սկիզբ առած այս ծրագիրը, որի գլխավոր հովանավորն է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, հովանավորներ են USAID-CAPS-ը, Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոս Անտոնիո Մոնտալտոն, ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացրել է ՀՀ տարածքում գտնվող 5 տեսարժան վայրերում 54 տեղեկատվական վահանակի եւ 33 ուղեցույցի տեղադրումը: Այս տարի կտեղադրվի 120 տեղեկատվական վահանակ, ավտոմայրուղիների վրա՝ 100 ուղենշան՝ Հայաստանի 19 պատմամշակութային վայրերում: Պրն Յիրիկյանն իր խոսքում նշեց. «Պատմական հուշարձանների պահպանումը ոչ պակաս կարեւոր է, քան ներկայումս մեր ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները, քանի որ այսօր մեր ազգային ինքնագիտակցության զարգացման եւ պահպանման գործում անցյալը մեծ դերակատարություն ունի: Մենք՝ ժամանակակիցներս պարտավոր ենք պաշտպանել ու պահպանել մեզ հասած հարստությունն ու բնությունը եւ փոխանցել այն սերնդեսերունդ»: Բոլոր ելույթ ունեցողները պնդում էին, որ նման ցուցանակների օգնությամբ ներկայացնելով Հայաստանի պատմամշակութային եւ բնական հարուստ ժառանգությունը, հազվագյուտ բույսերը, թռչուններն ու կենդանիները, ավելի մեծ թափով ու բովանդակալից կդառնա ու կխթանի զբոսաշրջությունը:**



**Ինչպես տեղեկացրին ծրագրի կազմակերպիչները, 2009-ին ծրագիրը հատուկ բաժին է մշակել հաշմանդամ երեխաների համար. բռայլյան վահանակներ են տեղադրվելու եւ 1400 բազմալեզու բռայլյան թերթիկներ են պատրաստվելու:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

AZG NEW 7.QXD 6/11/2009 10:11 PM Page 1





# Ֆեդյա Ալեխանյան. «Տղաները մարզական սխրանք գործեցին»

*Հայկական բռնցքամարտում գրանցված յուրատեսակ ռեկորդով նշանավորվեց Երեւանում վերջերս անցկացված աշխարհի պատանեկան առաջնությունը: Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ, միջազգային կարգի մրցավար, վաստակավոր մարզիչ Ֆեդյա Ալեխանյանի սաներից յոթը դարձան մեդալակիր (մեկ ոսկե, երկու արծաթե եւ չորս բրոնզե): Ակնկալվո՞ւմ էր նման խոշոր հաջողություն: Այս հարցով սկսեցինք զրույցը Ֆեդյա Ալեխանյանի հետ:*



- Փետրվար ամսին Երեւանում միջազգային ընկերական մրցաշար կազմակերպվեց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Ղազախստանի պատանեկան թիմերի մասնակցությամբ: Այն ժամանակ դեռեւս չէինք անցկացրել հանրապետության առաջնություն եւ, բնական է, հանպատրաստից թիմ ստեղծեցինք: Մեր տղաների մրցելույթը մեղմ ասած չգոհացրեց: Դա նկատի ունենալով, որոշ մասնագետներ մայիսի 23-30-ը Երեւանում կայացած աշխարհի առաջնության նախօրեին մտահոգված էին եւ նույնիսկ մեկ-երկու մեդալակիր ունենալու մասին էին փափագում: Հաջողվեց ընդամենը մի քանի ամսում կուռ, մարտունակ թիմ ստեղծել եւ 42 երկրների 255 մարզիկների պայքարում մեդալների հաշվարկով ՌԴ-ից հետո երկրորդը ճանաչվել:

**- Մեկ անգամ եւս նշենք մեդալակիրների անունները. գյումրեցի Կորյուն Սողոմոնյան (46 կգ, ոսկե մեդալակիր), արծաթե մեդալակիրներ, գյումրեցի Ջոնիկ Տոնոյան (54 կգ), մասիսցի Հայկ Խաչատրյան (70 կգ), երրորդ մրցանակակիրներ, երեւանցիներ Արթուր Քաջոյան (60 կգ), Ալեքսան Նազանյան (80), Գոռ Մարգարյան (+80 կգ) եւ վանաձորցի Վոլոդյա Հայրապետյան (63 կգ): Սա ռեկորդ է, որի հեղինակը դուք եք:**

- Այո, նոր, մեծ հաջողություն է հայկական բռնցքամարտում: Բայց հաղթանակը նշված մարզիկների անձնական մարզիչների, բռնցքամարտի հանրապետական ֆեդերացիայի, ՀԱՕԿ-ի, սպորտի նախարարության, մարզական մյուս գերատեսչությունների համատեղ ու շնորհակալ աշխատանքի արդյունք է: Ավելին, գործի հիմքը ժամանակին դրել են մարզաձեւի երախտավորները, մեր ուսուցիչները, որոնց գերակշիռ մասը, ավաղ, հրաժեշտ է տվել կյանքին: Այսօրվա սերունդն ընդամենը նրանց ստեղծած բարի ավանդույթների շարունակողն է: Գլուխ եմ խոնարհում մեր ուսուցիչների, նրանց թվում՝ իմ անձնական մարզիչ Վարդան Հովհաննիսյանի հիշատակի առաջ:

**- Ինչպե՞ս կբնութագրեք հավաքականի անդամներին:**

- Նախ՝ չեմպիոնի մասին: Ասում են հաղթողին չեն քննադատում: Մարզիկների առավելություններին չեմ անդրադառնա: Իմ կարծիքը կասեմ թերությունների մասին: Կորյուն Սողոմոնյանը ընդհանուր ֆիզպատրաստականությունը բարելավելու կարիք ունի: Այս մասին գիտի նրա անձնական մարզիչ հայրը՝ Սամվել Սողոմոնյանը: Նա շնորհալի մասնագետ է, համեստ մարդ եւ թույլ չի տա, որ չեմպիոն որդին երբեւիցե մեծամտանա, վարակվի «աստղային» հիվանդությամբ:

Փոխչեմպիոն Ջոնիկ Տոնոյանը երեւի թե առաջնության 250 մասնակիցներից ամենաարագաշարժն էր: Բայց նպատակին չի ծառայեցնում այդ առավելությունը եւ նույնիսկ որոշ դրվագներում ակտիվություն չի դրսեւորում: Մարզումներում գյումրեցին պետք է ավելի շատ կատարի հարվածներ. ուղիղ, կողային եւ ներքեւից կատարվող: «Արծաթով» բավարարվեց նաեւ իմ անձնական սանը՝ Հայկ Խաչատրյանը: Նա «կաղում է» տակտիկական հարցերում: Բացի այդ, Հայկը ուժերը ճիշտ չի բաշխում միջփուլային հատվածներում (ռաունդներում):

Խոսեմ չորս բրոնզե մեդալակիրների մասին: Հաղթողի իրական հավակնորդ էր Արթուր Քաջոյանը: Ունի բավարար արագություն, անկոտրում կամք, հիանալի է տեղաշարժվում ռինգում,: Երբեմն մտածում եմ, թե նախապատրաստության ընթացքում գուցե ինքս եմ ինչ-որ հարցում թերացել ու չեմ շտկել Արթուրի սխալը: Ամեն դեպքում Արթուրը պետք է անպայման բարելավի ֆիզիկական որակները եւ հղկի հարվածները: Վանաձորցի Վոլոդյա Հայրապետյանի համար սովորույթ է դարձել առաջին ռաունդում զիջել նախաձեռնությունը, միավորներ նվիրել մրցակցին: Այս մասին նա հանգստի ժամանակ է լսում մարտավկաներից ու հաջորդ երկու մրցափուլերում դրսեւորում է առավելություն, դժվարությամբ հետ վերադարձնում կորցրած ոսկե միավորները: Բարձրքաշայինի նախանձելի կառուցվածք եւ որակներ ունի Արթուր Նազանյանը: Նա երբեմն դառնում է պասսիվ: Թվում է, թե կամային պատրաստականությունն է թույլ: Բայց իմ կարծիքով նրա ընդհանուր ֆիզպատրաստականությունն է անբավարար, այլապես Ալեքսանն իրեն չափազանց վստահ կզգա ռինգում: Դիմացկունության պակասը նկատելի է նաեւ ծանրքաշային Գոռ Մարգարյանի մոտ: Այդ թերությունը զգացվում է հատկապես մենամարտի վերջնամասում, երբ կարծես շնչահեղձ է լինում շնորհալի այդ Հերկուլեսը: Մարզումներում Գոռը պետք է մեծ տեղ հատկացնի գործիքների վրա աշխատանքին. բազմազան հարվածներ կատարի բարձիկների, պարկերի, «տանձերի» վրա, հայելու առաջ հարվածների իմիտացիա անի ու այդ ամբողջ ընթացքում հսկողություն սահմանվի ժամանակի վրա: Այդ կերպ նա կկարողանա կառավարել, կարգավորել շնչառությունը:

Պատվանդան բարձրանալուն արժանի էին մեդալներից անմասն մնացած հավաքականի մյուս վեց անդամները: Նրանց անունները գիտակցաբար չեմ տալիս: Միայն կասեմ, որ նրանց խանգարեց մրցափորձի խիստ պակասը: Համոզված եմ, որ բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ, մարզաձեւի նվիրյալ Արման Մուրադյանը, որը շատ բան է արել, այսուհետեւ եւս գումարներ կտրամադրի պատանեկան հավաքականի մրցուղեւորների քանակն ավելացնելու համար եւ մեր տղաներն այլեւս մրցափորձի «սով» չեն ունենա:

**- Գիտենք, որ դուք նախկինում լավ վարպետ, բացարձակ անպարտելի եք եղել Հայաստանում: Նաեւ հմուտ մասնագետ եւ մանկավարժ եք, երկար տարիներ ձեր ղեկավարությամբ մեր թիմերը, որպես կանոն, մեդալով են վերադառնում արտագնա մրցումներից: Ինչո՞վ բացատրել նման, կասեինք՝ նախանձելի կայունությունը:**

- Սպորտը, մասնավորապես բռնցքամարտը, յուրատեսակ առանձնահատկություն ունի: Այստեղ պետք է հույս դնել նպատակային աշխատանքի վրա, քանզի գրեթե դեր չեն խաղում այսպես ասած ազդեցիկ կապերը: Ի՞նչ կարող է անել ցանկացած պաշտոնյան կամ օլիգարխը, եթե նրանց հովանավորյալը մրցակցի ցնցող հարվածից հայտնվում, փռվում է ռինգի հատակին: Հույսը մարզաձեւի մեր ազգային դպրոցն է, որը միավորում-ամփոփում է նաեւ բովանդակ ազգերի բռնցքամարտի լավագույն որակները:

**- Մի քանի խոսք հետագա անելիքների մասին:**

- Շարունակելու ենք պարապմունքները: Միջազգային պատասխանատու մրցաշարեր շատ կան: Առաջնայինը 2010-ին Սինգապուրում անցկացվելիք ամառային պատանեկան օլիմպիական առաջին խաղերն են: Պետք է կարողանանք համապատասխան մրցումներում վարկանիշ ձեռք բերել, որ կարողանանք ապահովել մասնակցությունը խաղերին:

Նախորդ դարավերջում միջազգային ֆեդերացիան փոփոխություններ մտցրեց մրցակարգում: Նախ մտցրին 2-ական րոպե տեւողությամբ 5 ռաունդանոց օրենքը: Ապա մրցափուլերի քանակը պակասեցրին, հասցրին չորսի: Սա էլ չնպաստեց գործի հաջողությանը: Երկու րոպեում նույնիսկ մեծագույն չեմպիոնը չի հասցնի «մատուցել» մարզաձեւի հմայքն ու գեղեցկությունը: Ուստի այս տարվա հունվարի 1-ին նորից կյանք մտավ նախկին մրցակարգը. 3 ռաունդ՝ երեքական րոպե տեւողությամբ: Սա ստիպում է, որ սկսնակների հետ տեղերում աշխատող մարզիչները մեծ ուշադրություն հատկացնեն տեխնիկական հնարքների ուսուցմանը: Մրցակցի դեմքի եւ որովայնի համապատասխան մասերին կատարված հարվածներն են գնահատում մրցավարները: Առավել դժվարանում է միավոր ձեռք բերելը: Առավել վստահ կզգան տեխնիկական հնարքների հարուստ զինանոց ունեցող մարզիկները, նրանք, ովքեր կկարողանան իրենց հմտություններով ապակողմնորոշել, շեղել մրցակցի ուշադրությունը, նպատակային հարվածներ կատարել ու հաղթական միավորներ շահել: Մի խոսքով, պետք չէ նոր հեծանիվ հորինել: Գլխավորը եղել ու մնում է մարզչի լավ աշխատանքը, որի հույսով են մարզախմբերը համալրում պատանիները: Նրանց հուսախաբ չանենք:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Հերթական պարգեւներն ըմբիշներին

**Երեկ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը դրամական պարգեւներ հանձնեց Եվրոպայի առաջնությունում մեդալների արժանացած ըմբիշներին, նրանց անձնական մարզիչներին ու հավաքականների մարզիչներին: Պարգեւատրվեցին Եվրոպայի չեմպիոն, հունահռոմեական ոճի ըմբիշ Արսեն Ջուլֆալակյանն ու նրա անձնական մարզիչ Սամվել Գեւորգյանը: Դրամական պարգեւներ ստացան նաեւ Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիրներ, ազատ ոճի ըմբիշներ Էդգար Ենոքյանն ու Ժիրայր Հովհաննիսյանը, նրանց անձնական մարզիչներ Էդիկ Թունյանցն ու Ժորա Հովհաննիսյանը: Պարգեւներից անմասն չմնացին հունահռոմեական ոճի ըմբշամարտի ՀՀ հավաքականի ավագ մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը, երկրորդ մարզիչ Էդիկ Սահակյանը, բժիշկ Զավեն Հարությունյանը, ազատ ոճի ըմբշամարտի ավագ մարզիչ Արայիկ Բաղդասյանը, երկրորդ մարզիչ Ռոբերտ Խաչատրյանն ու բժիշկ Գագիկ Ավետիսյանը:**

**Դրամական պարգեւի արժանացան նաեւ Շվեդիայի Մալմյո քաղաքում անցկացված թեքվոնդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնության բրոնզե մրցանակակիր Վահրագ Աղափանյանը, նրա անձնական մարզիչ Սարգիս Սարգսյանն ու հավաքականի մարզիչ Գեւորգ Դանիելյանը:**

# Ռոնալդուն էլ կխաղա «Ռեալում»



**«Մանչեսթր Յունայթեդը» համաձայնել է 80 մլն ֆունտ ստեռլինգով (94 մլն եվրո) «Ռեալին» տրամադրել Քրիստիանո Ռոնալդուին: Սպասվում է, որ գործարքը կավարտվի մինչեւ հունիսի 30-ը: Ակումբը թույլատրել է «Ռեալին» բանակցել Ռոնալդուի հետ: Հիշեցնենք, որ անցած շաբաթ «Ռեալը» 68 մլն եվրոյով գնել էր բրազիլացի Կակային, ինչը ռեկորդային ցուցանիշ է համաշխարհային ֆուտբոլում:**

**Ռոնալդուն «Մանչեսթր Յունայթեդ» էր տեղափոխվել 2003-ին «Սպորտինգից»: Անցած տարի նա արժանացավ Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի «Ոսկե գնդակ» մրցանակին: «Մանչեսթր Յունայթեդի» կազմում նա 291 խաղում 118 գոլ է խփել, 3 տարի անընդմեջ դարձել է Անգլիայի չեմպիոն:**

# Հաղթողներից մեկը Գաբրիել Սարգսյանն է

**Լաս Վեգասում անցկացված շախմատի կայծակնային մրցաշարում հաջող հանդես եկավ Գաբրիել Սարգսյանը: 12 հնարավորից վաստակելով 9,5 միավոր, Գաբրիելը 1-2-րդ տեղերը բաժանեց վրաց գրոսմայստեր Գեորգի Կախեշվիլու հետ: Մրցաշարին մասնակցում էր 37 շախմատիստ:**

# Անգլիացիները լուծեցին ուղեգրի հարցը



**Ֆուտբոլի աշխարհի առաջնության եվրոպական ընտրական գոտում կայացած 7 հանդիպումներից ամենահամառը Ուկրաինայի եւ Ղազախստանի հավաքականների մրցավեճն էր: Արդեն 19-րդ րոպեին ղազախները հաշվի մեջ առաջ անցան: Ուկրաինացիներին հաղթանակ պարգեւեցին Նազարենկոյի խփած 2 գոլերը (2-1): Նույն խմբում Անգլիայի հավաքականը «Ուեմբլի» մարզադաշտում 6-0 հաշվով ջախջախեց Անդորրայի ընտրանուն: 2-ական գոլ խփեցին Ռունին եւ Դեֆոն, մեկական անգամ աչքի ընկան Լեմփարդն ու Կրաուչը: Այդ խաղում երկարատեւ ընդմիջումից հետո Անգլիայի հավաքականի մեկնարկային կազմում էր Դեւիդ Բեքհեմը, որն իր 112-րդ հանդիպումն անցկացրեց: Իսկ ահա Անդորրայի հավաքականի դարպասապահ Կոլդո Ալվարեսի համար այդ խաղը վերջինն էր ազգային թիմում:**

**Ընտրական 6-րդ խմբում Անգլիայի հավաքականը 7-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց եւ գործնականում վճռեց եզրափակիչի ուղեգրի հարցը: Պաշտոնապես ուղեգիրը ձեւակերպելու համար բավական է հաջորդ խաղում՝ սեպտեմբերի 9-ին ոչ-ոքի ավարտել մրցավեճը խորվաթների հետ: Վերջիններս ուկրաինացիների հետ ունեն 11-ական միավոր:**

**Հոլանդիայի հավաքականը, որ Եվրոպայից առաջինն է եզրափակիչի ուղեգիր նվաճել, 7-րդ խաղում էլ հաղթեց՝ 2-0 հաշվով պարտության մատնելով նորվեգացիներին: Նույնպիսի հաշվով մակեդոնացիները հաղթեցին իսլանդացիներին, իսկ Սերբիայի հավաքականը հյուրընկալվելիս առավելության հասավ Ֆարերների նկատմամբ:**

**Ընտրական 4-րդ խմբում ՌԴ հավաքականը Հելսինկիում 3-0 հաշվով պարտության մատնեց ֆիններին: 2 գոլ խփեց Կերժակովը, մեկ անգամ էլ հաջողության հասավ Զիրյանովը: Ռուսները 6 խաղից վաստակել են 15 միավոր եւ ընդամենը մեկ միավոր են զիջում աղյուսակը գլխավորող գերմանացիներին: Շվեդները սեփական հարկի տակ 4-0 հաշվով առավելության հասան Մալթայի հավաքականի նկատմամբ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ծուլորեն հոսում է հայկական ժամանակը

*1-ին էջից*

Սակայն սա ժամանակավոր զբաղմունք էր մեր քաղաքականների եւ լրագրողների համար: Հայաստանում քաղաքական ժամանակն իր հունով գնում է միայն ընտրությունների կամ ընտրություններին մերձ ժամանակներում, դրանց միջակայքում սեւ խոռոչ է, հոսում է ծույլ հայկական ժամանակը, եւ ոչինչ, միայն լրագրողներն են քաղաքական դաշտի պատրանք ստեղծում՝ զոռով հարցազրույցների ենթարկելով մերոնց կամ ինտրիգներ լարելով: Հիմա, օրինակ, մեր քաղաքական դաշտը, ընդդիմադիր թե իշխանական, վերջին՝ լավ էլ քաղաքական ընտրություններից հետո ծմակ է մտնում, կամ, ավելի պատկերավոր ասենք, որսի համար կռվողներից նրանք, ում բաժին է հասել որսը, նստելու եւ ուտելու են ինչ կա-չկա, մյուսները մի կողմ քաշված՝ լիզելու են ստացած վերքերը, կազդուրվեն եւ սպասեն, մինչեւ իրենց որսի նոր ժամը կգա:

Լավ, այլեգորիայից անցնենք հասկանալի լեզվի: Մեր քաղաքական դաշտում վերջին քաղաքային ընտրություններից հետո այնպիսի ամայություն է, որ անգամ մարտի 1-ից հետո չի եղել: Ցրիվ եկած շղթան հավաքելու խնդիր կա երկուստեք: Բայց հավաքելուն շատ բան է խանգարում՝ փոխադարձ վիրավորվածությունը, մեծամասնական հովերը, խանդ եւ քեն: Այս բոլորը դեռ երկար թույլ չի տալու իրար կպցնել կարկատաններից վերածված քաղաքական դաշտը, որի մեծ կտորը, խոստովանենք, այժմ ՀՀԿ-ի ձեռքում է:

Սկսենք ՀԱԿ-ից: Այստեղ քանի գնում-հասկանալի է դառնում, որ ավագանու մանդատները չվերցնելը սխալ համարողներն այնքան էլ քիչ չեն, քանի որ այդպիսի ամբիոնից (քաղաքապետարանի գաղտնիքները հասարակական լսարան փոխադրելու պատեհ առիթից) հրաժարվելը բխում է միայն իշխող քաղաքական ուժի շահերից: Այնպես որ չի բացառվում, որ դասական «ռազբորկաներից» հետո մեկ էլ տեսար կոնգրեսն իր ոչ այնքան երեւացող անդամներով վերցրեց մանդատները... Մյուս կողմից՝ ՀԱԿ-ը ուզի, թե չուզի՝ պետք է ընդունի, որ ինքն այսպիսով դուրս է մղվում օրակարգային ընդդիմադիր ուժ լինելու մենաշնորհից եւ չպետք է նեղանա, որ որոշ ժամանակ անց ընդդիմադիր այլ ուժ վերցնի դոմինանտի դրոշը, սակայն դա հազիվ թե շատ շուտ լինի, իսկ առայժմ «զապասոյ» է, եւ անգամ այսօրվա հանրահավաքին այնքան քիչ մարդ կգա, որ այլեւս անիմաստ կլինի մի երկար ժամանակ հանրահավաք հրավիրելը:

«Ժառանգության» եւ ՀՅԴ-ի առումով եւս հարցականներ կան՝ երկուսն էլ դեռ երկար գործուն քայլեր չեն անելու՝ հռչակագրային հայտարարություններից զատ եւ միմյանց մարտավարությունն ուսումնասիրելով, համենայն դեպս՝ մինչեւ աշուն հաստատ, բացի այդ՝ կողմերից ամեն մեկին թվում է, թե առաջին քայլը դիմացինը պետք է անի, ամեն մեկն այստեղ իր ճշմարտությունն է առաջ մղելու:

«Բարգավաճի» առումով մի փոքր մութ բան կա: Այս ուժն, այնուամենայնիվ, իր մեջ չպարտված լիցքեր ունի, մանավանդ՝ շարքային բազում ակտիվիստներ, որոնք ֆինանսապես՝ չգիտեմ, բայց բարոյապես չվարձատրված մնացին, մանավանդ որ նրանց ներշնչել էին մի բան, բայց ստացվեց բոլորովին այլ բան, իրենց հուսախաբված են զգում: Այս իմաստով՝ ԲՀԿ-ն միշտ էլ անակնկալ մատուցելու ռեսուրս ունի իր մեջ՝ նայած հանգամանքներին եւ իրավիճակին:

ՕԵԿ-ը, որ այս տարին մարում է, դեռ կարող է երկրորդ շնչառություն ստանալ, բայց դա կախված է նրա նոր, երիցս կերպափոխումից, այն եւս վերջնական եւ անդառնալի, կախված է երկրի ղեկավարության բարեհաճությունից, կամ էլ կարող է աշխատել տրված պաշտոնների ծիրում արդարացնելու իրեն եւ միայն այդքան, սակայն այս տարին անհայտ է, թե դեռ ՕԵԿ-ում ինչպես են փորձելու իրենց հետագա գործելակերպը կառուցել, այնտեղ դեռ վերլուծում են կատարվածը:

Իսկ ահա իշխանական միակ «անկասելին»՝ ՀՀԿ-ն իր ներսում եւս փոփոխությունների եւ նորոգման խնդիր ունի, քանի այս ուժն առանձնապես հայտնի պահեստայիններով չի փայլել, դրան գումարած՝ ինտելեկտուալների պակաս է երեւում գոնե խմբակցության մակարդակով, քանի որ մեծ թվակազմ ունեցող խմբակցությունում չխոսող պատգամավորների առատությունն այդ է ցուցանում: Կարծում ենք, որ երկրի նախագահն ու ՀՀԿ-ի փաստացի ղեկավարը այժմ բավական ժամանակ ստացավ՝ կարգի բերելու իրեն սատարող այս ուժին կամ էլ զուգահեռ այլ ուժեր առաջ մղելու, ինչպես որ ընդունված է դասական բոլոր տեսակի կանոններից դուրս դրված մեր քաղաքական դաշտի վերջին տարիների փորձով: Այնպես որ՝ մոտակա ամիսներին ոչ մի նոր բան մեր քաղաքական դաշտում պետք չէ սպասել, բացի համաներման շուրջը ծավալվող իրադարձություններից ու դրան հետադաս զարգացումներից: Բայց սա առանձին անդրադարձի թեմա է՝ այսօր-վաղվա հայացքի կարոտ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

***Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաբերյալ տրեզենտացիոն նյութի պատրաստման նպատակով կազմակերպություն ընտրելու համար հրապարակային մրցույթի կազմակերպման մասին***

Մրցույթն անց է կացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաբերյալ տրեզենտացիոն նյութի պատրաստման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք, որոնք ունեն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2009թ. հուլիսի 13-ը, ժամը 17:30:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2009թ. հուլիսի 16-ը, ժամը 17:30:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2009թ. հուլիսի 22-ին, ժամը 17:30:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Հասարակայնության հետ կապերի ծառայություն, հեռ. 56-37-61, ներքին՝ 07-02, էլ-փոստ. mcba@cba.am:

*ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Թեքեյան կենտրոնի շենքում վարձով է տրվում 80 քմ գրասենյակային տարածք: Տարածքն ապահովված է կոմունալ բոլոր հարմարություններով, ջեռուցման, հովացման եւ անվտանգության համակարգերով, մալուխային ինտերնետով, 2 քաղաքային հեռախոսահամարներով, 2 սանհանգույցով: Գինը՝ 3900 դրամ 1 քմ-ի համար, իր մեջ ներառում է հետեւյալ ծառայությունները՝ մաքրություն, շուրջօրյա պահպանություն, ջրի եւ աղբահանության վարձ, 2 ավտոկայանատեղ:

Թեքեյան կենտրոնը տրամադրում է նաեւ 2 կոնֆերանս դահլիճ՝ մեծ (160 տեղ), փոքր (30 տեղ) եւ ցուցասրահ:

***Հեռ. 57-58-23, 57-30-57, 57-24-22***

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 11.06.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 370.17 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 519.46 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.97 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 224.85 |

## ՍՏԱՑԻ՛Ր ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՉԼՔԵՌՆԱԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ...

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE

Հայաստանում ֆրանսիական համալսարանը հայտարարում է ընդունելություն բակալավրիատի կրթական ծրագրով 2009-2010 ուսարվա համար հետեւյալ ֆակուլտետներում՝

- **Առեւտուր եւ մարքեթինգ**
- **Կառավարում**
- **Իրավունք**




Ուսումառության ավարտին ուսանողները ստանում են ֆրանսիական եւ հայկական պետական նմուշի դիպլոմներ եւ կարող են ուսումը շարունակել բուհի մագիստրատուրայում:

**Հայտերն ընդունվում են 2009 թ. հունիսի 11-ից հուլիսի 11-ը ժամը 10.00-ից մինչեւ 17.00:**

*Ներկայացվող փաստաթղթեր.*

- Միջնակարգ կրթության վկայական (բնօրինակը կամ պատճենը),
- 3x4 չափի մեկ լուսանկար,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի բնօրինակը եւ պատճենը (ծննդյան վկայականի դեպքում՝ նաեւ տեղեկանք բնակության վայրից եւ անձը հաստատող փաստաթուղթ լուսանկարով),
- Զինվորական հաշվառման վկայականը,
- Գործերի ընդունման համար վճարի անդորրագիրը (մեկ ֆակուլտետ դիմելու դեպքում գործերի ընդունման վճարը կազմում է 7200 դրամ, միաժամանակ երկու ֆակուլտետ դիմելու դեպքում՝ 9600 դրամ):



Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

*Հայաստանում ֆրանսիական համալսարան*
*0037 ք. Երեւան, Դավիթ Անհաղթի 10:*
*Հեռ.՝ 24 96 45, 24 96 55*
*Էլ. փոստ՝ communication@ufar.am*

**... ԴԱՐՁԻ՛Ր ՎԱՂՎԱ ՂԵԿԱՎԱՐԸ**

### Դասախոսական կազմի ընդունելություն Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում (ՀՖՀՀ)

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը միջպետական բուհ է, որը շնորհում է Ֆրանսիայի եւ Հայաստանի պետական նմուշի դիպլոմներ (Licence/Բակալավրիատ, Master/Մագիստրատուրա), որոնք հաստատված են Բոլոնիայի համաձայնագրով:

2009-2010 ուսարվա ընդունելության համար Հայաստանում ֆրանսիական համալսարանն աշխատանքի է հրավիրում դասախոսների հետեւյալ առարկաների գծով.

Իրավաբանություն
Ֆինանսներ, հաշվապահություն, աուդիտ
Մարքեթինգ
Տնտեսագիտություն

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) ֆրանսերեն եւ ուսանողների ղեկավարման համար պատասխանատու փորձառու դասախոս (նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործում)

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) անգլերեն

Ներկայացվող պահանջները

✓ Գիտությունների թեկնածու
✓ Մասնագիտական փորձ
✓ Դասավանդման փորձ
✓ Ֆրանսախոս կամ անգլախոս

Աշխատավարձը կախված է որակավորումից:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ՀՖՀՀ-ի գլխավոր քարտուղար պ. Ալեքսանդր Մարտինեսին, **secretaire–general@ufar.am**

- ինքնակենսագրություն (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)
- մոտիվացիոն նամակ (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)

Դիմումները ներկայացնել մինչեւ 2009թ-ի հունիսի 30-ը:

Հարցազրույցի կիրառվիրվեն ընտրված թեկնածուները:

ՀՖՀՀ-ին մանրամասն ծանոթանալու համար այցելել մեր ինտերնետային կայք www.ufar.am կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-17:00, (010) 24 96 64:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: